

10834

ԿՈԼԻԹՈՒՄՆ Ն. ԱՂԱԶԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

546
4-12

ՄԱՆՈՒԿԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

ԳՐՈՓ. ԷԽ. ՎԵԳՆԵՐ

Օ Գ

10 նկարով

Թարգմանեց
† Վարդպետ Աղանեան



546

4-12

Աղանեանի, Պօլից. 7

20 JUL 2010



Դ Վ Ա Բ Գ Գ Ե Ս Ա Գ Ա Ն

546

Կ-12 ԱՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ն. ԱՂԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ


ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

ԳՐՈՓ. Ի. ՎԱԳՆԵՐ

530
116-ԿԱ

Օ Գ

10 նկարով



1002
1001

Թարգմանեց
† Վարդպետ Աղանեան

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7

1914

07 AUG 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Փ Օ

Խորհրդ 31

062
00-011

I. Քամի եւ օդ.

Ի՞նչը կարող է աւելի գեղեցիկ լինել կապոյտ երկնքից, ուր լողում են մանր սպիտակ ամպիկներ։ Ի՞նչքան հաճելի բան է ամառուայ տաք օրը մէջքի վրայ պարկել խոտի մէջ ծառի ստուերի տակ և նայել այդ պարզ երկնքի հէնց խորքը. Ի՞նչքան ախորժելի է հետեւ ամպերին և նրանց հրաշալի տեսքի անվերջ փոփոխուելուն։ Նրանք մէկ հալւում են, մէկ ցըւում, մէկ նորից աճում։ Նրանք վազում են, վազում են անվերջ, խորը տարածութեան մէջ։ Վազում են, շարունակ իրար մօտից վազում... Բայց դէպի ուր Ո՞րտեղից... Ո՞ւր սկիզբն առան և ուր են անհետանում։

Ամպեր երկնային, մշտաշըջիկներ,
երկնակամարում, մարգարտէ շղթայով
երազեցէք, աքսորականներ, ինչպէս և ես
սիրելի հիւսիսից հարաւային երկիրներ...

Ամպերը լողում են դէպի այն կողմ, ուր նրանց տանում է քամին։ Եթէ քամին չինէր, նրանք կանգնած կը լինէին իրանց տեղ, չէին շարժուի։

Բայց ինչ տարօրինակ բան է. — մեր շուրջը գրեթէ քամի չկայ. երբեմն միայն դաշտի կողմից ձեր երեսին բուրաւէտ օդ է փչում և սօսափում են

4

ծառի տերևները. մինչդեռ ամպերը վազում են առանց կանգ առնելու, և վազում են բաւական արագ: Այս միայն հեռութից է այսպէս թւում, որ նըրանք դանդաղ են լողում, բայց հապա մէկ փորձեցէք նըրանց հասնել. ձինվ էլ չէք կարող հասնել: Ինչու է այսպէս. ներքել քամի չկայ, իսկ վերև քամի կայ, և բաւական խիստ քամի: Նա մեզ համար որտեղից որ գեղեցիկ ամպեր բերեց, որով մենք այժմ հըճում ենք: Նա մեզ յետոյ գուցէ կըբերի անձրևաբեր ամպ, կըբերի և լաւ եղանակ: Ո՞րտեղից է այդ քամին զալիս և ինչու հէնց այժմ չէ իջնում ներքե մեզ մօտ, երկրի վրայ:

Միթէ իրաւ չի կարելի այս հարցերին պատասխանել: Ամենից առաջ ի՞նչ բան է քամին: Կարծում եմ, որ դուք պիտի այդ գիտենաք... Հա: Քամին ոչ այլ ի՞նչ է, բայց եթէ շարժուող օդ: Բայց ի՞նչն է ստիպում օդին շարժուել: Եւ ի՞նչ բան է ի՞նքը օդը:

Օդը—մի նիւթ է, առանց որի դուք չէիք կարող աղըել ոչ մի ըոպէ: Օդից աւելի սովորական բան չկայ. Նա ամեն տեղ է, և մեր շուրջը, և ջրի մէջ, և գետնի մէջ, բայց այնուամենայնիւ դուք շատ քիչ բան գիտէք նրա մասին: Եւ այդ զարմանալի չէ, որովհետև գիտնականներն անդամ, հարիւր տարուց աւելի չկայ որ իմացան, թէ ի՞նչ բանից է բաղկացած օդը:

Չեղ գուցէ այն էլ զարմանալի թուայ, որ ես օդը «նիւթ» անուանեցի: Դուք երկի մտածեցիք, որ օդը ուրեմն այնպիսի նիւթ է, որ կարելի է շօշա-

փել, ձեռքին վերցնել, զննել, տեղից տեղ շարժել: Եւ յիրաւի, օդը առաջին հայեացքից շատ քիչ է նըրան այն բանին, որին դուք սովոր էք «նիւթ» անուանել: Օրինակ՝ նա քարի նման չէ: Բայց չէ որ ջուրն էլ շատ է տարբերում քարից. նըրան էլ ուղղակի չի կարելի ձեռքով վերցնել, ինչպէս որ քարը չի կարելի դնել սեղանի վրայ. կըհոսի և դուրս կերթայ մեր մատներից էլ, սեղանից էլ: Բայց դուք գիտէք, որ ջուրը կարելի է սառցնել և ջրից սառուցի կտոր ստանալ: Այն ժամանակ ջուրը բաւական կընմանուի քարին. «հեղուկ» ջրից ստացուեց «պինդ» սառոյց: Գիտէք նոյնպէս, որ ջուրը ցամաքելով, կամ, ինչպէս ասում են, գոլորշիանալով՝ անտեսանելի է դառնում: Ցամաքող ջուրը թռչում է օդի մէջ: Նա խառնում է օդի հետ և օդի նման է դառնում:

Նշանակում է, որ նոյն նիւթը՝ ջուրը կարող է ոչ միայն պինդ լինել, այսինքն՝ սառոյց, կամ հեղուկ, այլ կարող է և օդի նման լինել: Օդն էլ ուրեմն մի առանձին բան չի կարելի համարել: Բացի այդ, դուք ժամանակին կիմանաք, որ օդն էլ կարելի է այնպէս սառցնել, որ նա հեղուկ դառնայ, իսկ հեղուկ օդը կարելի է սառցնել և դարձնել պինդ «նիւթ» կապոյտ գոյնի:

II. Օդը Տեղ է բռնում, ինչպէս ուրիշ նիւթերը:

Այն ամենը, ինչ որ օդի նման է, մենք անուանում ենք «գազ» կամ գազանման մարմիններ: Ջուրն


ու օդը մեզ ցոյց են տալիս, որ գազը կարող է հեղուկ դառնալ, իսկ հեղուկը կարող է փոխուել պինդ մարմնի և ընդհակառակ: Բայց եթէ նոյն իսկ կարելի չլինէր ջուրը գազի փոխել, իսկ օդը՝ հեղուկի, այնուամենայնիւ, շատ նմանութիւններ կը գտնէք նրանց մէջ, եթէ դուք վերցնէք, ասենք, մի բաժակ, կործէք նըրան, և այդպէս շուռ տուած կոխէք ջրի մէջ, ջուրը չի լքուի նրա մէջ: Զի լքուի այն պատճառով, որ բաժակի մէջ օդ կայ: Օդը թոյլ չի տալիս ջրին ներս մտնել: Եթէ դուք այդ բաժակը թողնէք ջրի տակ, նա չի մնայ այդպէս շուռ տուած դրութեամբ. օդը ջրից թեթև է, ուստի և կաշխատէ ջրից դուրս գալ դէպի վեր: Օդը կը բարձրացնի ձեր բաժակը, և բաժակը կը նկնի կողքի վրայ: Միւնոյն ժամանակ կը տեսնէք, ինչպէս բաժակից օդը դուրս կը գայ դէպի վեր մեծ-մեծ բշտիկներով: Օդի փոխարէն բաժակի մէջ թափւում է ջուրը: Ճիշտ միւնոյն կերպով էլ, եթէ դուք բաժակը բերնէ բերան ջրով լքցնէք և փորձէք էլի վրէն ջուր աւելացնել, աւելորդ ջուրը կը թափուի բաժակի ափերից:

Կը նշանակի, ինչպէս ջուրը և ինչպէս ուրիշ բոլոր մարմիններ կամ «նիւթեր», այնպէս էլ օդը, ինչպէս ասում են, «տեղ է բռնում»: Զըով լիքը բաժակում դուք չէք կարող դարձեալ ջուր լցնել կամ որ և է նիւթ գցել նրա մէջ՝ առանց բաժակից գէթ ջրի մի մասը ցած թափելու: Այսպէս էլ օդով լի բաժակը չի կարելի ոչնչով լցնել, առանց միջից օդի մի մասը դուրս գալու:

III. Ինչպէս կարելի է օդը խսացնել եւ խսացրած օդը ննիւ:

Ինչպէս ուրիշ ամեն մի գազ, այնպէս էլ օդը կարելի է առանց դժուարութեան խտացնել:

Ի հարկէ տեսել էք, թէ ինչպէս երբ սելտերեան ջրի շահ բերանը բաց են անում, միջից ինչ որ գազ է դուրս գալիս: Եթէ հաւաքենք այն՝ նրանով կարելի է էլի մի այնպիսի շիշ լցնել: և մինչև անդամ աւելի մեծը: Ի՞նչպէս է ուրեմն այդքան գազը տեղաւորուել սելտերի ջրով լի շահ մէջ: Գազը տեղաւորուել է այն պատճառով, որ խտացած էր. նրա մի մասը հէնց ջրի մէջն էր, իսկ միւս մասը ջրի երեսին: Նա առաջ էլ աշխատում էր շահ դուրս գալ, բայց խցանը չէր թողնում. երբ խցանը հանեցիք— գազը դուրս եկաւ: Որ գազը աշխատում էր շահ դուրս գալ, երեսում է արդէն այն բանից, որ ճնշում



Օդը տեղ է բռնում: Նա բաժակից դուրս է գալիս մեծ-մեծ բշտիկներով, իսկ նրա տեղը լցնում է ջուր:

Երեսին: Նա առաջ էլ աշխատում էր շահ դուրս գալ, բայց խցանը չէր թողնում. երբ խցանը հանեցիք— գազը դուրս եկաւ: Որ գազը աշխատում էր շահ դուրս գալ, երեսում է արդէն այն բանից, որ ճնշում

էր խցանը: Եթէ երկաթէ թելը խցանից հեռացնենք
և խցանը թեթև դուրս քաշենք շնից, խցանը այ-
նուհետև դուրս կը թռչի ինքն իրան: Գազը ձնշելով
դուրս է հանում նրան:


Ինչքան շատ խտացնենք գազը, այնքան խիստ
է նա ձնշում:

Բայց պէտք է ձեզ ասեմ, որ նա ոչ թէ մէկ
կողմն է ձնշում, այլ ամեն կողմեր, այն էլ՝ համահա-
ւասար ոյժով: Եւ իրաւ, որ կողմն էլ դուք շիշը շուռ
տաք, որից դուրս է գալիս խցանը, բերանը դէպի
վեր կամ ներքեւ և կամ կողքին,—միևնույն է, խցանը
կանգ չի առնի: Գազը կըճնշէ նրան թէ վերև, թէ
ներքեւ և թէ կողքով:

Շատ հեշտ կարելի է ապացուցանել, որ խտա-
ցած օդը ձնշում է: Շիշը կիսով չափ լցրէք ջրով:
Նրա խցանի մէջ խրեցէք բարակ ծայրով մի խողո-
վակ այնքան երկար, որ խողովակի ներքեկի ծայրը
շնի խցուած ժամանակ՝ ջրի մէջ լինի: Շիշը պէտք է
շատ պինդ խցել և եթէ ճնշքեր մնան, պէտք է խցա-
նը լցնել զմուռով կամ մեղրամոմով: Այժմ վերցրէք,
խողովակի ծայրը շրթունքով և նրանից փորձեցէք
ինչքան զօռ ունէք, օդ փշել շնի մէջ: Օդի պղպջակ-
ներից կըտեսնէք, որ օդը մտնում է շնի մէջ: Այս օդը
խտացած կըլինի, որովհետև տեղաւորուեց հէնց այն
տեղում, ուր արդէն չըխտացած օդ կար: Եթէ այժմ
դադարեցնէք խողովակով օդ փշելը, նրանից կըսկսի
ջրի շադրուան բղիսել: Եւ կըբղիսի այնքան, մինչև որ
շնի ջուրը մի քիչ կըցածրանայ, այսինքն՝ ուրիշ խօս-

քով ասած, մինչև որ ջրի վրայի օդը կըլայնանայ:
Սրանից դուք կիմանաք, որ
խտացած օդը աշխատում է նորից
լայնանալ: Այս պատճառով էլ նա
ձնշում է այն ամենը, ինչ որ նրան
խանգարում է լայնանալ: Այս բո-
լորը հասկանալի է... բայց ահա՝
թէ ինչը կարող է ձեզ օտարոտի
թուալ, ոչ միայն խտացած օդը, այլ
և այն օդը, որ գտնւում է մեր
շուրջը, ձնշում է այն ամենը, ինչ
որ նա շրջապատում է...

Ինչու ուրեմն, կըհարցնէք
դուք, մենք չենք զգում օդի ճըն-
շումը: Արդարեւ, առաջին հայեաց-
քից այդ օտարոտի կըթուայ, բայց
եթէ գործին մօտից նայենք, այ-
նուհետև հասկանալի կըլինի: Օդը
ձնշում էր նոյնպիսի ձևով և այն
ժամանակ, երբ մենք գոյութիւն
չունէինք աշխարհում. նա ձնշել
է միշտ. այս ձնշման տակ են մար-
դիկ ծնուել և մեծացել. օդի ճըն-
շումը չէ դադարել և չէ դադա-
րում երեք ոչ մի րոպէ. մենք այն-
պէս ենք ընտելացել այդ բանին,
որ դա մեզ և երկրիս վրայ բոլոր ապրողների համար
դառել է նոյնպիսի մի անհրաժեշտութիւն, ինչպէս որ




Խտացած օդը ձնշում է
և բաժակից դուրս մը-
րում երեք ոչ մի րոպէ. մենք այն-
պէս շադրուան բղիսել այդ բանին,

շնչելն ու ուտելը: Երբ մենք երկար ժամանակ չենք
ուտում, սովածութիւն ենք զգում: Երբ օդի ճնշումը
սաստկանում է կամ թուլանում սովորականից, մենք
էլ մեզ սկսում ենք վատ զգալ: Եթէ այս ճնշումը
որպիսի և իցէ հրաշքով կարճուէր, երկրի վրայ բռ-
լոր ապրողներն էլ կըոչնչանային...

IV. Ի՞նչպէս իմանանք, թէ սովորական օդը ճնշում
է այն ամենը, որին նա շրջապատում է: Այս բանի մէջ համո-
գուելու համար այսպէս կանենք. բաժակը բերնէ բե-
րան ջրով լցնենք և ծածկենք վրէն մի կտոր կարտօն
կամ խաղաթուղթ: Աշխատենք, որ բաժակի մէջ ոչ
մի կաթիլ օդ չըմնայ: Յետոյ, խուփը մատով բռնած՝
շուռ տանք բաժակը գլխիվայր: Այժմ կարող էք
մատը վերցնել խուփից և գուցէ չափազանց կըզար-
մանաք, որ խուփը չի վայր ընկնի և ջուրը չի թա-
փուի բաժակից: Շատ տարօրինակ է, չէ: Սակայն
մտածենք, թէ ինչու ջուրը չըթափուեց բաժակից:

Ի՞նչպէս ասի, օդը ճնշում է այն ամենին, ո-
րին նա շրջապատում է: Նա միակերպ ճնշում է ա-
մեն կողմ—թէ ներքե, թէ վերև: Պէտք է ուրեմն և
ճնշէ թէ բաժակով լիքը ջրի և թէ նրա խուփի վրայ:
Երբ դուք բաժակը բռնած ունէք գլխիվայր, ներքե-
ւից նրա խուփի վրայ ճնշում է օդը, իսկ վերեկց

ջուրը: Հասկանալի է, որ ինչքան շատ ջուր կայ բա-
ժակում, այնքան սաստիկ պէտք է ճնշի նա: Եթէ
ձեր ձեռքի վրայ քար դնենք, դուք կըզգաքնրա ծան-
րութիւնը: Հէնց այս ծանրութիւնը քարի ճնշումն է
ձեր ձեռքի վրայ: Եթէ բար կէս գրւանքա է կշռում,
ուրեմն նրա ճնշումն էլ կէս գրւանքին է հաւասար:



Օդը ճնշում է խուփի վրայ և չի թողնում որ ջուրը դուրս թափուի:

Եթէ բաժակի ջուրը քառորդ գրւանքա է կշռում, նրա՝
բաժակի խուփի վրայ արած ճնշումն էլ հաւասար կը
լինի քառորդ գրւանքի ոյժին: Սակայն բաժակի
խուփը չէ հեռանում, և ջուրը դուրս չի թափւում.
ճնշանակում է՝ օդը նրա վրայ ներքենից աւելի սաս-
տիկ է ճնշում և նրան սղմում բաժակի ափերին:

Իսկ ի՞նչպէս հաւաստիանանք, որ, ճշմարիտ, օդը

չէ թոյլ տալիս, որ խուփը բաժակից վայր ընկնի:—
Շատ պարզ կերպով. բաժակի փոխարէն վերցնենք
ձագառ, նրա ծայրը մատով ծածկենք: Հէնց որ մենք
մատը վերցնենք և թողնենք, որ օդը ճնշի ոչ միայն
ներքեկից խուփի վրայ, այլ և վերևից, ձագառի նեղ
ծայրով, ջրի վրայ, — խուփը իսկոյն վայր կընկնի:

V. Օդը հաւասար կերպով ննում է ամեն կողմից:

Եթէ դուք կարողանաք ձեռք բերել երկու բե-
րան ունեցող շիշ, որ կոչում է կրկնաբերան սրուակ,
կարող կըլինիք օդի ճնշումն իմանալ և մի ուրիշ ե-
ղանակով:

Եթէ կրկնաբերան սրուակի երկու խցաններումն
էլ մի մի խողովակ անցկացրէք: Խողովակներից մէ-
կի ներսի ծայրին հազրիք և վրէն կապեցէք ուետի-
նէ մի դատարկ գնդիկ, յետոյ երկու բերաններն էլ
պինդ ամրացրէք խցաններով: Սրուակի ներսը նոյն-
պիսի օդ կայ, ինչ որ դուրսը: Նա ամեն կողմ նոյն-
պէս սաստիկ է ճնշում, ինչպէս և դրսի օդը. ուետի-
նէ գնդիկը չէ ուռչում և չի սղմւում, որովհետև մի
կողմից նրա վրայ խողովակից ճնշում է դրսի օդը,
իսկ միւս կողմից—ներսինը: Եթէ ճնշողութիւններն
էլ կատարելապէս համահաւասար են: Այս բանը մի-
ևնոյն բանն է, ինչ որ եթէ մատներով մի թղթի թերթ
հուզ տանք. թուղթը չի ծռուի ոչ մէկ և ոչ միւս
կողմ: Բայց եթէ դուք նրա վրայ ճնշէք միայն մի
կողմից, նա իսկոյն կըծոռուի և նոյն իսկ կըպատռուի:

Այժմ փորձեցէք սրուակից օդը դուրս ծծել այն
խողովակով, որի ծայրին գնդիկ չըկայ: Իսկոյն կը
տեսնէք, որ գնդիկը կսկսի ուռչել. ապա ուրեմն՝ դրսի
օդը սկսեց մանել նրա մէջ խողովակի միջով և սկսեց
նրա պատերը ձգել: Եթէ դուք օդը դուրս էք ծծում
սրուակից, սրուակի օդը քչանում է: Ուստի և նրա
ճնշողութիւնը գնդակի վրայ աւելի թոյլ է լինում:
Դրսի օդի ճնշողութիւնը, որը խողովակով մտնում է
գնդակի մէջ, աւելանում է: Եւ ահա գնդակը լայնա-
նում է: Սրուակը կանգուն դրութեան մէջ լինի,
թէ պարկացնէք կողքի վրայ, կամ թէ շուռ տաք
գլխիվայր, — միւնոյն է, գնդակը կուռչի: Սրանից կը
տեսնէք, որ օդը ճնշում է ամեն կողմ:

Այժմ դուք հեշտ կըհասկանաք, թէ ինչու ջուրը
դուրս չի թափւում այն բաց օքից, որի բերանը կո-
խում ենք ջրով լի ամանի մէջ: Զուրը շշից չի կա-
րող դուրս գալ նրա համար, որ դրսի օդը ճնշում է
ամանի ջուրը և նրան յետ է մղում շշի մէջ:

Օդի ննողութիւնը կըպարզէ ձեզ խիստ շատ բան,
ինչ որ առաջ անհասկանալի էր բում: Օրինակ. դուք
կարող էք ձեզ համար «ջրհան» պատրաստել: Դուք
կարող էք օդի ճնշողութեամբ ջուրը բարձրացնել խո-
ղովակի միջով: Վերցրէք լամպի մի ուղիղ ապակի.
Դա կարող է ծառայել ինչպէս ջրհանի խողովակ: Վերց-
րէք մի հին թելի կոճ ու վրէն փալաս փաթըթեցէք
այնպէս, որ պինդ մտնի ապակու մէջ: Կոճի ծակի
մէջ մի երկար ձող ամրացրէք: Այսպիսի մի կոճ, որ
կարելի է փայտից բռնած յետ ու առաջ շարժել ջըր-

հանի խողովակի մէջ, կոչւում է «ձող» (поршень): Փալասը պէտք է լաւ թաթիւել իւղի մէջ, իսկ ձողի երկու ծայրերը զմռել կամ մեղրամոմ քսել: Այժմ ձողը անցկացրէք ջրհանի մէջ և խողովակի մի ծայրը դրէք ջրի մէջ: Այնուհետև ձողը վերև քաշեցէք: Ջուրն էլ հետը կըբարձրանայ: Ներքեւ քաշեցէք, ջուրն էլ ներքեւ կիշնի: Նորից վեր քաշեցէք, ջուրը նորից կըբարձրանայ: Երբ գուք ձողը բարձրացնէք, այն օդը, որ ճնշում է ջրի վրայ, մղում է նրան շշի մէջ և ստիպում վեր բարձրանալ:

VI. Ինչո՞վ է զանազանում օդը բարից եւ ջրից. Եւ ինչո՞ւ է նա միակերպ ննշում ամեն կողմ:

Այժմ գուք գիտէք, որ օդը ճնշում է այն ամեն բանին, ինչին որ նա շրջապատում է: Բայց դուք դեռ չըգիտէք, թէ ինչո՞ւ է ճնշում: Եւ իսկապէս, ի՞նչպէս բացատրենք նրա ճնշողութեան պատճառը:


Այս բանի համար համեմատենք միմեանց հետ օդը, ջուրն ու քարը: Քարը դուք կարող եք դնել ձեր առաջ սեղանի վրայ, իսկ օդն ու ջուրը չէք կարող դնել: Նրանց պէտք է մի որևէ բանի մէջ տեղաւորել: Տեղաւորենք նրանց երկու շշի մէջ: Մէկը լրցրէք ջրով, միւսի մէջ ոչինչ միք լցնի, այլ ուղղակի խցանով փակեցէք: Նրա մէջ կըլինի օդ: Այժմ ձեր առաջ դրած է քար, մի շիշով ջուր, միւսի մէջ օդ: Փորձենք առաջին շշից ջրի կէսը թափել, իսկ երկ-

ըորդից դուրս ծծել օդի մի մասը: Այժմ արդէն ջուրը ամբողջ շիշը չի բռնում, այլ միայն նրա կէսը: Կունենանք միայն կէս շիշ ջուր: Իսկ օդ ինչքան կը լինի: Շիշը դարձեալ օդով լիքը կըլինի: Գործի ամբողջ էութիւնը հէնց սրա մէջն է. ինչքան օդ էլ որ դուրս ծծէք շիշ, մնացած օդը դարձեալ կըտարածուի ամբողջ շիշ մէջ: Նոյնը կըլինի և ամեն մի գաղի հետ: Զէք կարող այնպէս անել, որ շիշ մի մասի մէջ գաղ լինի, օրինակ՝ օդ, իսկ շիշ միւս մասում ոչինչ չը լինի:

Եւ ահա ես ու դուք գտանք քարի, ջրի և օդի մէջ եղած ամենաէական տարբերութիւնը, այսինքն՝ պինդ մարմի, հեղուկի և գաղի միջի տարբերութիւնը: Եւ իսկապէս. քարը կըմնայ հանդարտ դրած սեղանի վրայ, իսկ ջուրն ու օդը՝ չէ: Եթէ ջուրը ուղղակի ածենք սեղանի վրայ, կըհոսի նրա վրայից, իսկ օդը կըցըռուի ամեն կողմ: Հէնց այս պատճառով էլ չի կարելի շիշը գէթ կիսով չափ օդով լցնել: Կընշանակի՝ եթէ քարը դնենք բաժակում՝ նա իր ծանրութեամբ ճնշում կըգործի միայն բաժակի յատակի վրայ, ջուրը կըթափուի և այս պատճառով կըճնշէ ոչ միայն յատակի, այլ և բաժակի պատերին, իսկ օդը կաշխատի տարածուել ամեն կողմ, ուստի և նա ճընշում է ոչ միայն շիշ պատերին, այլ և խցանի վրայ:

VII. Ինչո՞ւ է օդը ճեռում եւ ի՞նչ բան է կապոյն
Երկինքը:

Ինչպէս տեսանք, օդը ճնշում է նրա համար, որ
նա աշխատում է տարածուել, կամ, ինչպէս ասում
են՝ լայնանալ: Նա ճնշում է այն ամեն բանին, որ
արգելք է լինում նրա լայնանալուն: Իսկ նրա լայ-
նանալուն արգելք են այն ամենը, ինչ որ շրջապա-
տում է նը-
րան, կամ
ինչին որ նա
է շրջապա-
տում, Բայց
ինչո՞ւ նա
երկրից չէ
հեռանում:
Ի՞նչն է ար-
գելում նրան
մեղնից հե-
ռանալ, օրի-
նակ դէպի
վերև:



Օդապարիկ, բարձրացած տմպերից վեր:

Փորձեցէք մի քար գցել վերև: Դուք գիտէք, որ
քարը նորից կընկնի ներքեւ: Քարը գցեցէք վերև և
հետեւցէք նրան: Կըտեսնէք, որ սկզբում քարը թըռ-
չում է արագ, յետոյ աւելի դանդաղ, կարծէք թէ
մի բան խանգարում է նրա թոշելուն, վերջապէս նա
մի վայրկեան կանգ է առնում և ապա դէմուդէմ ընկ-

նում ներքեւ: Նոյնը կպատահի և ամեն մի իրի Յանձնա-
որ մենք կդցենք վերև: Նոյնը կպատահէր և օդին,
եթէ կարողանայիք նրան քարի պէս վերև գցել:

Քարը ներքեւ է ընկնում նրա համար, որ նրան
դէպի երկիր է քաշում իր ծանրութիւնը: Եթէ նա
ծանր չլինէր և ոչ մի կշիռ չունենար, այն ժամանակ
էլ ի՞նչը կխանդարէր նրան երկրից թոշելուն: Նոյն-
պէս էլ օդը: Նա պահպանւում է երկրի շուրջը իր
ծանրութեան շնորհիւ: Նա մեզանից կթոշէր կհեռա-
նար, եթէ կշիռ չունենար: Այդ օդի հետ միասին
կանյայտանար և մեր կապոյտ երկինքը:

Ի՞նչ աւելի գեղեցիկ բան կարող է լինել, քան
մեր գլխավերեւ այդ կապոյտ կամարը: Նրա տեղ
երկրի վրայ այն ժամանակ կբացուէր աստղալից մի
սկ անդունդ: Ցերեկով մենք աստղերը չենք տեսնում
ոչ թէ նրա համար, որ նրանք չկան մեր գլխին, այլ
այն պատճառով, որ ինքը երկինքը, արևով լուսա-
ւորուած, լոյս է տալիս: Նրա կապոյտ լուսի ետեից
մենք չենք նկատում աստղերի թոյլ փալվկելը: Ինչ-
պէս որ տան պատը յետ է մղում իրանից տան վրայ
ընկած լոյսը, այնպէս էլ օդը յետ է մղում իրանից
արևի լուսի մի մասը: Մենք տեսնում ենք այդ կա-
պոյտ լոյսը և անուանում նրան երկինք: Նշանակում
է որ օդն էլ, ինչքան էլ նա թափանցիկ լինի՝ ունի
իր գոյնը: Այդ գոյնը՝ կապոյտն է:

Անշուշտ դուք երբեկից կարդացել էք հէքիաթ-
ներում, որ կարելի է երկինք գնալ: Ցիշում էք, ինչ-
պէս չըեղէն ձին իվանի հետ երկինք են գնում և

մտնում են լուսին լուսինեանի ամբոցը։ Բայց այդպէս ասում են միայն հէքիաթներում, իսկ իրօք երկինքը պարզապէս օդն է, — նոյնպիսի օդ, ինչպիսին մեղ շրջապատում է, Բայց եթէ երկինք չի կարելի գնալ, դրա փոխարէն մարդիկ կարողացան օդապարիկով կապոյտ երկնքից վեր բարձրանալ։ Երկու քաջասիրտ գիտնականներ բարձրացան այնպէս վեր, որ նրանց գլխին շատ քիչ օդ մնաց. մեր երկիրը պատող գըեթէ բոլոր օդը նրանց ներքեւ մնաց, եւ ահա նրանք իրանց գլխին երկնքի փոխարէն տեսան սև անդունդ, որը ցերեկով տեսան աստղեր, իսկ իրանց ոտների տակ տեսան կապոյտ երկինքը։

VIII. Օդի ննողութեան ոյժը

Այսպէս ուրեմն, օդն էլ, ինչպէս ուրիշ ամեն մի առարկայ, կշիռ ունի։ Առաջ մարդիկ կարծում էին, որ կարող են լինել առարկաներ առանց որևէ կշռի, «անկշիռ» առարկաներ։ Օդի մասին էլ կարծում էին, որ նա անկշիռ է, այսինքն՝ որ նա ոչ մի կշռ չունի։ Այժմ մենք գիտենք, որ այդպիսի առարկաներ չկան։ Ոչ թէ միայն օդը, այլ նոյն իսկ շատ աւելի թեթև գաղեր կարելի է կշռել, — օրինակ այն գաղը, որ վառւում է փողոցի լապտերներում և որ օդից թեթև է։ Բայց բանը նրանումն է, որ օդ կըշռելը այնքան էլ պարզ բան չէ։ Արա համար հարկաւոր է նախապէս կշռել որևէ է ապակէ կամ մետաղէ գունդ օդով, յետոյ որևէ է եղանակով նրանից

դուրս ծծել ամբողջ օդը։ Գունդը պէտք է այնպէս փակել, որ նորից մէջը օդ չմտնի, և նորից կշռել առանց օդի։ Դրանով մենք կդիտենանք գնդի քաշը օդի հետ և նրա քաշը առանց օդի։ Ապա մենք կարող ենք իմանալ, թէ ինչքան է կշռում ինքը՝ գունդի մէջ գտնուած օդը։ Սակայն, ամբողջ օդը գունդից դուրս ծծել, թէկուզ հէնց առանձին եղանակներով— շատ դժուար է. ինչքան քիչ օդ մնայ գնդի մէջ, այնքան դժուար է լինում այն դուրս ծծելը։ Այդպիսի եղանակով մարդիկ իմացան, որ օդն էլ կշիռունի, բայց իսկական քաշը նրանք միանգամից չիմացան։

Բանից երեաց, որ օդը 770 անգամ թեթև է ջրից, Ուրեմն, քառասուն վեղրանոց տակառ օդը նոյնքան է կշռում, ինչքան որ մի շիշ ջուրը։ Սակայն, չկարծէք թէ եթէ օդը այդքան թեթև է, նրա ճնշողութիւնն էլ մեծ չէ։ Նրա ճնշումը շատ գորեղ է։ Իւրաքանչիւր վերջոկ գետնի վրայ նա ճնշում է 50 գրւանքա ուժով։ Նոյնպիսի ոյժով օդը ճնշում է և մեր մարմնի ամեն մէկ վերջոկի վրայ։ Եթէ այսպիսով հաշուենք, թէ ինչ ուժով է օդը ճնշում չափահաս մարդու ամբողջ մարմնի վրայ, կստացուի 900 վթից աւելի կշիռ։

Ահա թէ ինչ մեծ ուժով է ճնշում մեղ վրայ սովորական օդը, և մենք այնուամենայնիւնրա ծանրութիւնը չենք նկատում։

Բայց ինչո՞ւ է այդպէս ուժեղ կերպով օդը ճընշում։ Պարզապէս նրա համար, որ մեր վրայ դըտ-

նուռող օդի շերտը շատ հաստ է: Այս շերտը շարունակում է շատ վերստեր և նոյն իսկ տասնեակ վերստեր դէպի վեր: Այնպիսի բարձր սար չկայ, որ իր բարձրութեամբ օդից վեր լինէր:

Բարձր գանուռող օդը ճնշում է ներքեւ գանուած օդին: Իսկ երկին մօտ գանուած օդի վրայ ճնշում է ամբողջ օդային շերտը:

Դուք գիտէք, որ ճնշումով կարելի է օդը խըտացնել. այս պատճառով էլ երկրի մօտի օդը շատ խիտ է:

Ինչքան հեռու է դէպի վեր, այնքան օդը պակաս խիտ է լինում, որովհետև նրա վրայ օդի պակաս շերտ է լինում պարկած: Ինչքան շատ խացնենք օդը, այնքան խիտ է լինում և նրա ճնշողութիւնը: Նշանակում է, որ գեանի մօտ օդի ճնշողութիւնն աւելի է, քան վերեւում: Ինչքան վերև գնանք, այնքան օդի ճնշողութիւնը թոյլ է:

IX. Մարդիկ ե՞րբ զտան օդի ճնշողութեան ոյժը:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս գտան մարդիկ օդի ճնշողութեան ոյժը: Այդ բանը որոշելը, ինչպէս երեւում է, աւելի հեշտ է, քան օդը կշռելը... Մտաքերենք, թէ ինչպէս ջրով լիքը բաժակը մենք շուռ տուինք, որի վրայ կարտօնի կտոր կար ծածկած: Այժմ դուք գիտէք, որ բաժակի խուփը օդի ճնշողութիւնն էր պահում. այս ճնշումը ջրի կշռեց աւելի մեծ էր: Ենթադրենք, թէ բաժակի փոխարէն մի երկար խո-


դովակ լինէր մեր ձեռքին, որի միայն մի ծայրը լինէր բաց: Ինչ երկարութեան ուզում է թող լինի խողովակը: Ինչքան նա երկար լինի, այնքան խողովակի մէջ եղած ջրի սիւնն երկար կլինի, այնքան պէտք է որ ուժեղ կերպով ճնշէ ջուրը կարտօնի խուփի վրայ, խողովակի շուռ տուած ժամանակ: Եթէ մենք վերցնենք աւելի երկար խողովակ, այն ժամանակ ջրի ճնշողութիւնը վերջապէս կդերակշռէ օդի ճնշողութեան և կարտօնը վայր կընկնի: Որպէս զի իմանանք, թէ ինչ ոյժով է այդ ջուրը ճնշում կարտօնի վրայ, բաւական է կշռել խողովակի միջի ջուրը: Այս բանի համար պէտք է վերցնել գրեթէ հինգ սաժէն երկարութեան խողովակ: Այդպիսի մի խողովակ երեք յարկանի տնից ցածր չի լինի: Հասկանալի է, որ այսպիսի երկար խողովակ գործ դնել շատ դժուար կլինի, բայց, բարեբաղտաբար, ուրիշ շատ հեղուկներ կան, որոնք ջրից ծանր են: Եւ ահա, ջրի փոխարէն մարդիկ վերցրել են շատ ծանր մի հեղուկ՝ սնդիկը և շինել են մի կարեռ գործիք օդի ծանրութիւնը կամ ճնշողութիւնը ցոյց տալու համար: Այդպէս էլ անուանել են այդ գործիքը «ծանրաչափ» (барометръ):

Ես հաւատացած եմ, որ դուք տեսած կլինիք սնդիկը ջերմաչափի մէջ: Դա մի գեղեցիկ արծաթանման հեղուկ է: Գերմանացիները նրան ոհեղուկ արծաթ» են կոչում: Նա շատ թունաւոր է: Նրա հետ պէտք է շատ զգոյց վարուել, և շատ էլ թանգ արժէ: Մնդիկը տասներեք անգամից աւելի ծանր է

ջրից։ Այս պատճառով էլ օդի ճնշողութիւնն իմաստալու համար խողովակն էլ աւելի քան տասներեք անգամ կարձ պէտք է վերցնել, այսինքն՝ արշինից մի քիչ երկար։

Իսկ ի՞նչպէս է կազմուած ծանրաչափը։ Նայեցէք նկարին։ Ծանրաչափի գլխաւոր մասը բաղկացած է մի ապակէ խողովակից, որ ամրացած է տախտակէ յենարանի վրայ։ Այս խողովակի վերին ծայրը պինդ խցուած է, իսկ ներքևի ծայրը, որ նոյնպէս ծռուած է դէպի վեր, բաց է։ Խողովակի երկարութիւնը արշինից աւելի է։

Եթէ այսպիսի մի խողովակ ամբողջապէս լըցնենք սնդիկով, իսկ այնուհետեւ խցած ծայրը շուռ տանք վերև, այն ժամանակ սնդկի մի մասը նրանից դուրս կը թափուի, բայց ոչ բոլորը։ Այժմ դուք գիտէք թէ



Ծանրաչափ

ինչու։ Մնդիկն այսպիսի խողովակից դուրս չի թափուամ նրա համար, որ օդը ճնշում է սնդիկի վրայ միայն մի ծայրից. այն ծայրից, որ կողմից որ խողովակը բաց է։ Միւս՝ վերեկի ծայրից խողովակը խցուած է, և օդը այդտեղ չի կարող ճնշում գործ դնել սնդիկի վրայ։ Նշանակում է որ օդը մղում է սնդիկը դէպի խողովակի խցուած ծայրը։ Ինչքան ուժեղ կերպով նա ճնշէ, այնքան աւելի կբարձրացնէ սնդիկը. և ինչքան թոյլ կերպով այնքան պակաս։ Որպէսզի տեսնենք, թէ ինչպէս է սնդիկը երբեմն բարձրանում խողովակի մէջ և երբեմն իջնում, դրա համար խցուած ծայրի կողքին կպցրած է գծիկներով մի տախտակ. գծերից կարելի է նկատել, թէ ինչքան է բարձր կանգնած սնդիկը խողովակի մէջ։

Այս բարձրութիւնը, որի վրայ գտնուում է սընդիկը, ցոյց է տալիս օդի նեռողութիւնը սնդիկի վրայ։ Եթէ ծանրաչափը ձեռքներիս բարձրանանք գէպի վեր, սարի վրայ, նրա միջի սնդիկը կցածրանայ։ Այս եղանակով կարելի է իմանալ, թէ ինչքան ենք մենք բարձրացել։

X. Ինչի՞ համար օդի նեռողութիւնը մետապէս փոփոխուում է երկրի վրայ։

Երբ մարդիկ ծանրաչափ շինեցին, նկատեցին, որ օդի ճնշումը նոյն իսկ մի տեղում շարունակ փոփոխութեան է ենթարկւում։ օրինակ. օրէնը երկու անգամ մէկ ուժեղանում է, մէկ պակասում։ Նշա-

նակում է, որ օդի ծանրութիւնը միշտ միակերպ չէ լինում ծանրաչափի վրայ: Բայց երեաց, որ այն ժամանակ, երբ մի տեղ օդի ճնշումը պակասում է, ուրիշ տեղ նա նոյն չափով աւելանում է և ընդհակառակ: Ապա ուրեմն երկիրը պատող բոլոր օդի ծանրութիւնը միշտ մնում է միակերպ:


Եթէ այս բոլոր օդը հաւաքենք մի գնդի մէջ, նոյնքան կը կշռի, ինչքան որ կշռում է 250 վերստ շրջապատով սնդկի գունդը: Թէ ինչքան մեծ կլինի օդի այդպիսի մի գունդ, կարելի է գատել նրանով, որ սնդիկը 13ից աւելի անգամ ջրից ծանր է, իսկ ջուրը 770 անգամ ծանր է օդից: Եթէ այս սնդիկը փուենք երկրի վրայ հաւասար շերտով, կը ծածկեր ամբողջ երկիրը նոյնպիսի հաստութեան շերտով, ինչ բարձրութիւն որ կունենայ ծանրաչափի միջի սնդկի սիւնը:

Բայց ինչու օդի ճնշումը միևնոյն տեղում միակերպ չէ մնում, այլ շարունակ փոխում է: Զէ՞ որ երկրի վրայի օդային շերտը միևնոյնն է...

Այս բանը հասկանալու համար շշի վզին կապեցէք ուետինէ մի գունդ և շիշը տաքացրէք: Դուք իսկոյն կտեսնէք, թէ ինչպէս ուետինէ գունդը կսկսի ուռչել: Նշանակում է որ օդի ճնշումը շշի ներսում աւելացաւ, օդը լայնանում է, իսկ լայնանալով՝ նա ձգում է գնդակի պատերը: Եթէ ուէտինէ մի հին գնդակ ունիք, որ արդէն փափկած լինի, փորձեցէք այն մի կարծ ժամանակ տաք վառարանի վրայ դնել: Գնդակը կուռչի և միառժամանակ նորից կը պնդանայ:

Օդը տաքանալուց լայնանում է: Օդը շշի մէջ կամ դնդակի մէջ չաւելացաւ. նա միմիայն լայնացաւ և այս պատճառով աւելի մեծ տեղ բռնեց: Ապա ուրեմն, եթէ շիշը տաքացնենք, առանց բերանը խցելու, միջի օդի մի մասը դուրս կգայ: Նրանում աւելի պակաս օդ կը մնայ, քան թէ առաջ էր: Հասկանալի է, որ մնացած օդի կշիռն էլ աւելի պակաս կլինի:

Այժմ ենթագրենք, թէ միենոյն ծանրաչափի վրայ երբեմն աւելի տաք օդի շերտ է կանգնած, և երբեմն աւելի սառը: Թէպէտե այս շերտերի հաստութիւնը միակերպ կլինի, բայց նրանց ծանրութիւնը կլինի տարբեր. տաք շերտը աւելի թեթև կլինի, և ծանրաչափի սնդիկի վրայ աւելի թոյլ կերպով կճնշի: Կարող է, սակայն, և այնպէս լինել, որ տաք շերտը նոյնպէս խիտ կլինի, ինչպէս և սառը. այդ դէպում, ընդհակառակ, նա կճնշի աւելի սաստիկ, որովհետեւ ինչպէս դուք հէնց իսկոյն տեսաք, օդը տաքացնելով նրա ճնշումն էլ աւելացնում է:



Զերմաչափ


Այժմ դուք աեմնում էք, որ ծանրաչափի վրայի օդի շերտի միակերպ հաստութեան ժամանակ նրա ճնշողութիւնը կարող է տարբեր լինել։ Միայն աչքի առաջ ունեցէք, որ տաք օդը սառից թեթև է, բայց եթէ նրա լայնանալուն արգելք լինին՝ նա կճնշի աւելի ուժեղ կերպով։

XI. Ի՞նչպէս կարելի է օդային ջերմաչափ սարֆել։

Ինչպէս օդը, այնպէս էլ պինդ մարմիններն ու հեղուկները տաքանալով լայնանում են, իսկ սառելով սղմւում։ Հէնց այս բանից էլ մարդիկ օդուտ են քաղել ջերմաչափ կազմելու համար։ Մի կերպ քննեցէք սենեակի ջերմաչափը։ Նրա ապակէ գնդակում սնդիկ է ածած։ Գնդակից դէպի վեր մի բարակ ապակէ խողովակ կայ։ Եթի օդի մէջ տաքութիւն է լինում, սնդիկը տաքանում է և սրանից լայնանում։ Լայնանալով նա խողովակի միջով վեր է բարձրանում։ Խողովակի կողքին ջերմաչափի տախտակի վրայ թուանշաններ են գրուած։ Եթէ ջերմաչափը դնենք սառցածրի մէջ, սնդիկը կանգ կառնի 0 թուանշանի վրայ։ Եթէ եռացած ջրի մէջ դնենք, սնդիկը խողովակի միջով կբարձրանայ 80 թուանշանի վրայ։ Ապա ուրեմն սառոյցը հալւում է 0 աստիճանի վրայ, իսկ ջուրը եռ է գալիս 80.ի վրայ։

Ջերմաչափ ինքներդ կարող էք սինել, միայն ոչ թէ սնդիկի, այլ օդային։ Շինեցէք այնպէս, ինչպէս որ գծագրուած է նկարի վրայ։ Սրա համար դուք

պէտք է ձեռք բերէք մի շատ փոքր ապակէ սրուակ բարակ պատերով և երկար ապակէ խողովակ։ Այս խողովակը կարելի է ծռել, սաստիկ տաքացնելով լամպի բոցի վրայ (տաքացնելուց ապակին փափկում է)։ Ծռեցէք երկու տեղ, ինչպէս այդ ցոյց է տուած նկարի վրայ։ Ծռած խողովակի կարճ ծայրը խցանի ծակի միջից խրեցէք սըրուակի մէջ, իսկ երկար ծայրը ամրացըրէք տախտակի վրայ, որ ունի բաժանմունքներ։ Սրուակը խցանով փակելուց առաջ խողովակի մէջ լցըրէք մի կաթիլ իւղ։ Եթէ դուք ըդուշութեամբ փչէք խողովակի մէկ կամ միւս ծայրից, կարող էք այնպէս անել, որ կաթիլը կանգնի խողովակի երկար կեռի հէնց մէջտեղը։ Եւ ամեն ինչ պատրաստ է... Սրուակը պինդ փակեցէք այն խցանով, որի մէջ դրուած է խողովակի ծայրը, և



Օրային ջերմաչափ

գուշութեամբ փչէք խողովակի մէկ կամ միւս ծայրից, կարող էք այնպէս անել, որ կաթիլը կանգնի խողովակի երկար կեռի հէնց մէջտեղը։ Եւ ամեն ինչ պատրաստ է... Սրուակը պինդ փակեցէք այն խցանով, որի մէջ դրուած է խողովակի ծայրը, և

այդ խցանը մեղրամոմով լցըէք, Երբ սենեակի մէջ տաքութիւն լինի, սրուակի միջի օդը կլայնանայ և իւղի կաթիլը կմղի դէպի վեր. իսկ երբ ցուրտ լինի, օդը կըսղմուի, և իւղի կաթիլը կցածրանայ:

XII. Թէ ինչպէս է swf օդը վերեւ բարձրանում:

Այսպէս ուրեմն, տաքութիւնից օդը լայնանում է: Լայնանալով օդը թեթևանում է և բարձրանում դէպի վեր: Օդն իր տաքութիւնը ստանում է երկրից. երկիրը, արեից տաքանալով, տաքացնում է և օդը: Ամառուայ տաք օրը օդի տաք հոսանքները անդադար վեր են բարձրանում: Երբ և իցէ մի տօթօր, ճաշից յետոյ, նստեցէք դաշտում տաք գետնի վրայ և նայեցէք երկրի ուղղութեամբ հեռուն: Ձեզ այսպէս կթուայ, որ թէ ծառերը, թէ տունը և թէ այն բոլոր առարկաները, որոնք գտնւում են դաշտի վերջում, դողդողում են և ալեկոծւում: Կարծես թէ նրանք ինչ-որ մի թեթև նիւթից լինին շինուած, որ տատանւում է ամենաթեթև քամուց: Ի հարկէ դուք չէք կարծի, որ տունը և ծառերը իսկապէս սկսել են դողալ. այդպէս միայն թւում է... Առարկաները չեն դողում, այլ տատանւում են և ալեկոծւում տաք օդի վերև բարձրացող հոսանքները:

Վերցըէք վառած մոմը, բոնեցէք ձեր առաջ և մի աչքով նայեցէք նրա բոցի վրայից պատին: Հէնց որ մի թեթև սկսէք մոմը շարժել, կ'ալեկոծուի և այն պատը, որին նայում էք դուք: Ալեկոծւում է նա

այն պատճառով, որովհետեւ դուք նրան նայում էք տաք օդի դողացող հոսանքների միջով: Այս տաք օդը մոմի բոցից վերև է բարձրանում:

Եթէ մոմի կամ լամպի վրայ բոնենք թղթից դուրս կտրած մի փոռան, հազցրած ասեղի վրայ, նա կսկսի պտոյտ գալ: Նրան կըմղէ վերև բարձրացող տաք օդը:

XIII. Ինչո՞ւ swf օդը, Երբ բարձրանում է վերեւ, սառչում է:

Երկակայեցէք, որ դուք որևէ հրաշքով յանկարծ ընկաք օդի տաք հոսանքի մէջ, որ շուտ օրին դաշտից բարձրանում է դէպի վեր, և նրա հետ թռաք, լողացիք դէպի վեր: Ես կուզենայի երբենցէ այդպէս ճանապարհորդել և քամու հետ միասին թռչել երկրի վրայից: Ինչքան հետաքրքրական բան կտեսնէի ես այն ժամանակ: Ինչքան նոր բան կիմանայի ես իմ հրաշալի ճանապարհորդութեան ժամանակ: Այժմ ներկայացրէք ձեզ, որ սկսել էք վերև բարձրանալ օդային հոսանքի հետ միասին... Ահա բարձրացել էք մեծ-մեծ ծառերից վեր, որոնք այժմ վերեկից ձեզ թւում են իբրև մանը թփիկներ... Ինչքան հեռու է ընկնում այժմ ձեր հայեացքը... Ահա ծառերի մէջ երեսում է ձեր գիւղը, ինչպէս տիկնիկների մանը տնակների մի կոյտ, իսկ նրանցից շատ, շատ հեռու ձգւում է թռոտ ճանապարհը: Ինչպէս հեշտ և լաւ է մարդ շունչ քաշում այդ բարձրունքում, մաքուր, տաք օդի մէջ...

Բայց դուք արդէն բարձրացել եք այնքան բարձր, որ էլ ոչ գիւղ էք տեսնում և ոչ ծառ։ Դուք զգում էք, որ մըսում էք։ Շնչելը դժուարանում է։ Աշխատում էք օդ ներշնչել լիքը կրծքով, բայց և այնպէս օդը չէ բաւականանում։ Ուր գնաց այն հրաշալի տաք օդի հոսանքը, որի հետ դուք վեր բարձրացաք երկրից։ Այդ հոսանքը դարձեալ ձեր շուրջն է, բայց այլև արդէն այն չէ, ինչ որ երկրի մօտ էր։ Նա լայնացաւ և օդը նօսրացաւ։ Լայնանալով, հոսանքը սառեց։ Բայց ինչու այդպիսի կերպարանափխութիւն պատահեց նրան, Եթէ դուք մի փոքրը մտածէք, անշուշտ կըմքնէք, թէ բանն ինչումն է...»

Թանի որ ձեր հոսանքը ներքեն էր երկրին մօտ, նրա վրայ ճնշում էր երկրի վրայի օդի ամբողջ շերտը։ Դուք արդէն գիտէք, որ նա ամեն մի վերշոկի վրայ ճնշում է 50 գրւանքա ոյժի չափ։ Իսկ այժմ, երբ հոսանքը բարձրացաւ, ներքելը թողեց ամենախիտ օդը։ Նրա վրայ այժմ ճնշում է միմիայն այն օդը, որ գտնում է իր վերկը։ Ճնշումը շատ աւելի թուլացաւ և հոսանքը լայնացաւ։ Նա աւելացաւ, իսկ նրա օդը նօսրացաւ։

Բայց ինչու այս օդը սառեց։ Նրա համար, որ ինքը հոսանքը լայնացաւ... Այս բանը հետևեալ օրինակով կարելի է բացատրել։ Թող որևէ երկու սենեակում մի.մի վառարան լինի։ Մէկ սենեակը թող մեծ լինի, իսկ միւսը՝ փոքր, իսկ նրանց վառարանները լինին բոլորովին միակերպ։ Ասենք թէ դուք ուզում էք այդ երկու վառարանը վառել և երկու

վառարանի մէջ էլ դնում էք միատեսակ փայտի կըտորներ միենոյն թուով։ Վառարանները վառեցիք... Այժմ գատեցէք, որ սենեակում աւելի տաք կլինի, փոքրում թէ մեծում... դուք, իհարկէ, կասէք, թէ փոքրում աւելի տաք կլինի, իսկ մեծում աւելի սառ։ Բայց ինչու։ Զէ որ վառարանները բոլորովին միակերպ էին. ինչքան տաքութիւն որ մէկ վառարանը տուեց, նոյնքան էլ միւսը։ Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ թէպէտ վառարանները միատեսակ են, բայց մի վառարանի տաքութիւնը տարածուեց մեծ սենեակում, իսկ միւսինը փոքր սենեակում։ Միենոյնը պատահեց և ձեր օդի հոսանքի հետ. այն տաքութիւնը, որ նա իր հետ տարաւ երկրից, նրա մէջ էլ մնաց, բայց միայն երբ հոսանքը բարձրացաւ և լայնացաւ, տարածուեց մեծ տարածութեան վրայ։ Հոսանքի օդը դառաւ աւելի սառը։

Այս բանը, սակայն, բոլորովին ճիշտ չէ։ Հոսանքի տաքութիւնը գնաց նաև այն բանին, որ նրա օդը նօսրացնէ։ Իսկապէս էլ, դուք գիտէք որ եթէ օդը տաքացնենք, նա լայնանում է։

Նշանակում է որ տաքութիւնը գնում է օդի լայնանալու (նօսրանալու) համար։ Այսպէս է այն օդը, որ բարձրանում է վերև և լայնանում, պէտք է որևէ տեղից տաքութիւն վերցնի իր լայնանալու համար։ Իսկ տաքութիւն նա ոչ մի տեղից չի կարող վերցնել... Եւ ահա այս բանի վրայ կորցնում է նա իր սեպհական տաքութիւնը և սառում է։ Եթէ որևէ կերպով այս օդը նորից ներքե իջնի երկրի վրայ,

նա նորից կտաքանար այնպէս, ինչպէս որ էր ձեր
հոսանքը:

XIV. Ի՞նչ է լինում օդի ջրային զագը, երբ բարձրա-
նում է դէպի վեր:

Այսպէս ուրեմն, տաք օդը երկրից բարձրանա-
լով դէպի վեր, լայնանում է, իսկ լայնանալով՝ սառ-
չում... գիտնականները գտել են, որ չոր օդը, ամեն
մի 47 սաժէն բարձրանալով՝ մի աստիճան սառում
է: Քառասուն և եօթ սաժէնը հաւասար է Պետեր-
բուրգի ս. իսահակի տաճարի բարձրութեան: Նշա-
նակում է, որ եթէ օդի մէջ ս. իսահակի տաճարի
հիմքի մօտ 15 աստիճան տաքութիւն լինի, երբ այդ
օդը բարձրանայ վերև և հասնի տաճարի խաչին, նա
մի աստիճանով պակաս տաք կլինի, այսինքն 14 աս-
տիճան: Եթէ բարձրանայ երկու անգամ բարձր, —
կունենայ 13 աստիճան, եթէ երեք անգամ՝ մի-
միայն 12:

Բայց այս դեռ բոլորը չեն... երբ դուք օդի հո-
սանքի հետ բարձրացաք վերև, ոչ թէ միայն ցուրտ
զգացիք, այլ և խոնաւ թուաց ձեզ: Եւ յիրաւի, հա-
պա մի ձեռք տուէք ձեր շորին. կտեսնէք որ բոլո-
րովին նամացել է. այս էլ մի շատ զարմանալի բան չէ:

Օդի մէջ միշտ խոնաւութիւն կայ, մանաւանդ
մի այսպիսի ամառուայ տաք օր: Օդը շարունակ
ջուր և խոնաւութիւն է ծծում երկրից: Տաքանալով՝
նա այն իր հետ անում է վերև: Ինչպէս և օդի այն

հոսանքը, որի հետ դուք սկսեցիք ճանապարհորդել,
անշուշտ իր հետ երկրից տարաւ ջրային գոլորշու-
մի մասը: Առաջ, սակայն, խոնաւութիւնը չնկատե-
ցիք, որովհետեւ օդը տաք էր: Տաք օդի մէջ աւելի
շատ ջրային գոլորշի կարող է պարունակուել, քան
սառը օդի մէջ: Այս պատճառով էլ տաք սենեակը
խոնաւանում է, երբ ցուրտ եղանակին երկար ժա-
մանակ լուսամուտը բաց էք թողնում: Պատերն էլ,
յատակն էլ կարող են խոնաւութեամբ ծածկուել:
Քանի որ սենեակում տաք էր, ամբողջ ջրի գոլոր-
շին կամ գազը օդի մէջն էր: Իսկ երբ ցրտեց, ջրային
գազի մի մասը նորից ջրի փոխուեց և ինչպէս խո-
նաւութիւն՝ նստեց պատերին: Ահա թէ ինչու ձեր
շորն էլ խոնաւացաւ...

Բայց ինչքան էլ ցուրտ, խոնաւ թուայ ձեզ վերև, —
մի փոքր դիմացէք: Տեսէք թէ յետոյ ինչ կինի...

Մինչև որ ես ձեզ կբացարէի, թէ ինչի խո-
նաւացաւ ձեր շորը, օդի մէջ ձեր շուրջը նոր փո-
փոխութիւն տեղի ունեցաւ: Նայեցէք ձեր շուրջը:
Ո՞ւր մնաց այն պարզ, թափանցիկ օդը, որ առաջ
կար: Ամբողջը լցուեց թեթև մառախուղով, կարծես
թէ մի տեղից ծխով լքցուեց: Օդի խոնաւութիւնը
ջրային մանրիկ գնդիկների ձև ընդունեց: Նըանցից
է կազմուած այս մառախուղը, եթէ դուք օդի հետ
աւելի բարձրանաք, այն ժամանակ թեթև մառախուղը
կխտանայ և ներքեմից կերևայ ինչպէս ամպ: Բոլոր
ամպերը երբեմից անտեսանելի ջրային գազ էին, որ
երկրից բարձրացել է օդի տաք հոսանքների հետ:

34

Հապաւ այժմ ներքև նայեցէք: Այդ ուր գնացին ձեզ ծանօթ դաշտերն ու ծառաստանները: Ճշմարիտ, հաղիւ կարող էք դուք երկիրը տեսնել մառախուղի միջից: Երկիրը հեռու է ձեզնից: Բայց այնուամենայնիւ կարող էք հասկանալ, որ այդ տեղը ձեզ բոլորովին անծանօթ է... Այս դուք բոլորովին աննըլկատելի կերպով շրջապատող մառախուղի հետ թռել կատելի էք ուր-որ հեռու ձեզ ծանօթ տեղերից: Ուգնացել էք ուր-որ հեռու ձեզ ծանօթ տեղերից: Ուգնացել էք ուր-որ հեռու ձեզ ծանօթ տեղերից: Դուք շաղրութեամբ նայեցէք ներքեւ: Դուք տեսնում էք, թէ ինչպէս վազում են ձեր մօտից և բլուրները, և դաշտերն ու գետերը: Ի հարկէ, նրանք չեն վազողը, այլ դուք ինքներդ էք նրանց մօտից տարւում: Դուք տարւում էք օդի հետ, բայց նրա շարժողութիւնը չէք նկատում: Երբ դուք վազում էք քամու դէմ, քամին ձեզ ուժեղ է թւում: Երբ վազում էք քամու քամին ձեզ ուժեղ է թւում: Եթէ դուք կարողանայիք այն հետ, նա թւում է թոյլ: Եթէ դուք կարողանայիք այն պէս արագ վազել, ինչպէս շարժւում է քամին, այն ժամանակ ամենեին չէիք նկատի թէ քամի կայ:

Այժմ դուք թռել էք ամպի հետ միասին: Քանի որ ներքև էիք, քամի չկար: Հէնց որ բարձրացաք, նկատեցիք մի «ազատ» քամի: Հաղիւ է պատահում, որ բարձր տեղ քամի չինի: Այստեղ գըեթէ միշտ քամի է փչում: Բայց ուր պիտի տանէ քամին ձեր ամպը: Այս բանն իմանալ հեշտ չէ, — ի զուր չէ, որ քամուն անուանել են «ազատ»: Բայց ամեն բան, ինչ որ ասում են, ճիշտ չէ լինում... Մարդիկ քամին «ազատ» են կոչել դեռ այն ժամանակ, երբ նրանք

չեն գիտեցել, թէ ինչի՞ է նա փչում և որտեղից է դալիս:

XV. Քամու եւ ամպերի մասին

Երկար ժամանակ մարդիկ աշխատում էին իմաստալ, թէ որտեղից և ինչու է փչում քամին: Երկար հետեւում էին նրանք օդի շարժողութեան և այն բոլոր փոփոխութիւններին, որ կատարւում էր օդի մէջ: Նրանք օրէցօր, տարէցտարի, նկատում էին զանազան տեղերում, թէ երբ և քանի աստիճան տաքութիւն կամ ցրտութիւն կար օդի մէջ, ինչքան էր նրանցումն այդ միջոցին, ուր և ինչքան ուժեղ էր փըշում քամին, ինչպէս էին փոփոխում ամպերը, ինչքան ջուր էր թափուել իբրև անձրև, կարկուտ և ձիւն, ինչքան ջրային գոլորշի կար օդի մէջ: Այս բոլորը գրում էին, համեմատում և ահա—անցել են երկար տարիներ և մինչև անգամ խիստ շատ տարիներ, և մարդիկ իմացան, վերջապէս, թէ ինչ բան է քամին, դէպի ուր է փչում, որտեղից է գալիս և ինչ է բերում իր հետ:

Եւ այսպէս քամին արդէն դադարեց մարդկանց համար «ազատ» համարուել: Այժմ արդէն յաճախ կարելի է վաղօրօք գուշակել, թէ որտեղից է նա փչում, ուժեղ կլինի թէ թոյլ, իր հետ անձրեւ կըբերի թէ պարզ եղանակ...

Այս, քամին եղանակ է բերում մեզ, բայց նա նաև կեանք է բերում, որովհետեւ եթէ քամին չըլի-

նէր, չէր կարելի ապրել երկրիս վրայ: Շող երկրներից քամին մեզ տաքութիւն է բերում, սառից՝ ցուրտ, ծովից ցամաք է բերում ամպերով ջուր անձրեխ կամ ձեան կերպարանքով: Եթէ քամին չլինէր, այն ժամանակ մի քանի երկրներում սաստիկ շոգ կլինէր, միւսներում սաստիկ ցուրտ, իսկ ցամաքի վրայ բոլորովին ջուր չէր լինի: Բոլոր ջուրը գետերով ծովը կդնար, և ծովից ամպերով նոր ջուր չէր գալ: Բոլոր ցամաքը անապատի կփոխուէր առանց բուսականութեան և կենդանիների:

Ահա ուրեմն, թէ ինչքան կարեոր բան է քամին երկրիս վրայ բոլոր ապրողների համար: Քամին, բացի դրանից, նաև զարդարում է երկինքը, եթէ քամին չլինէր, այն գեղեցիկ ամպերը չէին լինի, ուրոնց շնորհիւ երկնքի տեսքը շարունակ փոփոխում է: Ցամաքի վրայ մշտապէս կապոյտ երկինք կլինէր առանց որեւէ ամպի: Ծովի վրայ բարձրում մշտապէս կանգնած կլինէր խիտ մռայլ մառախուղ: Քամին երկրնքում ճանապարհին թողնում է ջրային շոգիներ ամպերի ձեռվ:

Ի՞նչպէս զարմանալի բազմազան են այդ մասնիշուղի կոյտերը: Երբեմն նրանք նման են ծխի քուլաներին, որոնք դիզւում են մէկը միւսի վրայ: Երբեմն յիշեցնում են բամբակի կլոր փաթեթները կամ սպիտակ գառնուկների հօտը, որոնք արածում են կապուտակ դաշտի վրայ: Երբեմն նրանք ձգւում են ինչպէս ահազին, կիսաթափանց բմբուլներ երկնքի մի ծայրից մինչև միւսը: Ցածախ միաժամա-

նակ երկնքի երեսին զանազան տեսակ ամպեր են լինում: Եւ այն ժամանակ կարելի է տեսնել, որ զանազան ամպեր մի քանի յարկ կախուած են մէկը միւսի վրայ: Երկինքը այդ միջոցին աւելի գեղեցիկ է թւում: Այդ ժամանակ կարելի է նկատել, թէ ինչպէս վերևի ամպերը բոլորովին ուրիշ կողմ են շարժւում, քան ներքեւնները: Մի քանի ամպեր արագ են լողում, իսկ միւսները թւում են անշարժ:

Բայց ինչպէս գեղեցիկ են ամպերը երեկոյին կամ վաղ առաւտեան, երբ նրանք լուսաւորուած են արշալուսի ոսկէզօծ կամ կարմիր գոյնով: Բայց ցերեկով էլ նրանք շարունակ փոփոխում են իրանց գոյնը:

Ամպերի տեսքից կարելի է դատել, թէ ինչքարձրութեան վրայ են նրանք գտնուում: Եթէ երկրից նայէք այն մառախուղին, որ գոյացել է ձեր շուրջը, երբ բարձրանում էիք վեր, նա ձեզ անշուշտ կյիշեցնի ծխի թեթև քուլաները: Այդպիսի ամպեր շարունակ կազմւում են ամառը, երբ տաք օդը բարձրանում է վերև: Այս քուլաները մեծ-մեծ կոյտերով դիզւում են իրար վրայ: Իրանք ամպերը այսպատճառով կոչւում են «կոյտ-կոյտ» ամպեր: Բաւական է որ տաք խոնաւ օդը մի վերստի չափ բարձրանայ վերև, որպէսզի նրա մէջ գոյանան կոյտկոյտ ամպեր: Այդ բանից առաջ օդը 10 աստիճանով աւելի է սառում, քան թէ էր երկրի վրայ: Ամենից վերև լողում են փետրաձև ամպերը: Նրանք երբեմն 13 վերստ են բարձրանում և երբէք 5 վեր-

ստից ցած չեն իջնում։ Հիւսիսում, ամառուայ մէջերքին, նրանք ամբողջ օր լուսաւորուած են լինում արևով, և կէս գրշերին նոյնպիսի պայծառ ու սպիտակ են լինում, ինչպէս որ էին ցերեկը։

Դառնանք, սակայն, մեր քամուն, որ ձեզ տանում է ուր-որ հեռու տեղ։ Յիրաւի, ինչպէս իմանանք, թէ ուր էք դուք թոշում։ Եթէ ձեր գիւղը, որտեղից դուք բարձրացաք, ծովից շատ հեռու չէ, այն ժամանակ ամենից հաւանական է, որ այդ քամին ձեզ կտանի դէպի ծով։ Բայց որպէսզի ճիշտն իմանաք, թէ դէպի ուր է շարժւում ձեզ շրջապատող օդը, բաւական չէ գիտենալ միայն, թէ ուր է գտնուում ձեր գիւղը։ Բացի դրանից հարկաւոր է իմանալ, թէ չորս կողմը ինչ է. հարթ տարածութիւն, թէ լեռներ, բարձր են սրանք, ինչ ուղղութեամբ են գնում, շատ գետեր ու լճեր կան չորս կողմը։ Իսկ զլիսաւորը պէտք է իմանալ, թէ ուր և ինչքան մեծ է օդի ճնշողութիւնը ձեր ճանապարհորդութեան ժամանակ։

XVI. Ո՞րտեղից եւ դէպի ո՞ւր է ժամին փչում։

Դուք արդէն գիտէք, որ օդի ճնշումը շարունակ փոփոխում է։ Ուր օդի ճնշումը աւելի է, նշանակում է այնտեղ օդը աշխատում է աւելի ուժեղ կերպով լայնանալ։ Վերցնենք երկու շիշ. մէկը նօսր օդով, միւն աւելի խիտ օդով, և երկուսի բերանները միացնենք. իհարկէ կտեսնենք, որ երկրորդ շիշ օդը,


ուր նրա ճնշողութիւնն աւելի ուժեղ է, կհոսի դէպի առաջինը։ Նոյնը լինում է և ազատ օդում։ Քամին միշտ փչում է այն տեղերից, ուր օդի ճնշումն աւելի մեծ է, դէպի այնտեղերը, ուր այն պակաս է. թէ ներքել՝ նոյն իսկ երկրի վրայ, և թէ վերել։ Բայց, ինչպէս դուք արդէն գիտէք, ներքեւ և բարձրում քամին կարող է փշել զանազան կողմեր։ Այս բանը դժուար չէ հասկանալ։ Դուք գիտէք, որ օդը տաքանալով լայնանում է։ Նա դառնում է թեթև և երկրից բարձրանում դէպի վեր։ Այս պատճառով էլ նրա ճնշումը երկրի մօտ պակասում է։ Բայց վերեռում, ուր որ դուք բարձրացաք տաք հոսանքի հետ, ճշնշումը առաջուանից աւելանում է, որովհետև այստեղ շարունակ մեծ քանակութեամբ օդ է բարձրանում շարունակ դէմ բանակութեամբ օդի նորարող, որովհետև ներքելից շարունակ տաք օդի նորանոր հոսանքներ են դէմ ընկնում։ Եւ ահա, ներքեւ իջնելու փոխարէն այդ օդը ցըւում է այս ու այն կողմ։ Նա առաջ է շարժւում դէպի այն կողմ, ուր կողմ։ Նա առաջ է շարժւում դէպի այն կողմ, ուր օդի ճնշումը թոյլ է։ Այսպիսով առաջ է գալիս որ օդի ճնշումը թոյլ է։ Այսպիսով առաջ է գալիս քամին։ Նա միշտ բարձրում է իր ճնունդն առնում, այնտեղ, ուր որ ճնունդ են և ամպերը, ուր ճնուել է և ձեր ամպիկը։ Շոգ երկիրներում օդը տաքանում է և բարձրանում վերև. այս պատճառով էլ վերևում քամին փչում է շոգ երկրներից դէպի ցուրտը, իսկ երկրի վրայ սովորաբար ցըտից դէպի տաք։

XVII. Ի՞նչպէս է օդը շարժւում համու ժամանակ:

Եթէ դուք ձեր ամպի բարձունքից կարողանայիք հետևել օդի շարժողութեան, կտեսնէիք, թէ ինչպէս դուք փոքրառփոքր ծուռում էք դէպի մի կողմ: Փոխանակ ուղղակի դէպի առաջ շարժուելու, օդը շրջան է անում: Աակայն օդի այդ շրջանները սովորաբար շատ մեծ են լինում: Այս պատճառով էլ նրանց դժուար էնկատել: Բայց դուք, ի հարկէ, նկատում էք, որ քամին շարունակ փոխւում է. այսօր մի կողմից է փշում, իսկ վաղն արդէն միւս կողմից: Ինչքան փոքր են քամու կատարած շրջանները, այնքան շուտ է նա փոխւում:

Մտաբերեցէք, թէ ինչպէս գիտքամին աշնանը խաղ է անում չոր տերեների կամ փողոցի փոշու հետ: Նա պտտում է այդ փոշին և նրա սիւները բարձրանում օդի մէջ: Այդպէս էլ պտուակածն ոլորտում է օդը քամու ժամանակ: Շատ անգամ ձմեռը, քամին փոշու փոխարէն սիւներ է բարձրացնում ձիւնի փշուրներից: Այսպիսի սիւնի ներսը օդը բարձրանում է վերև, և սրա համար էլ նրա ճնշումն այստեղ շատ աւելի պակաս է, քան սիւնի դուրսը, և ահա օդը ամեն կողմից ներս է մտնում սիւնի մէջ: Նա դէպի ինքն է քաշում ամենը, ինչ որ ճանապարհին պատահում է նրան և ինչ որ նա կարող է բարձրացնել: Ինչքան որ ուժեղ լինի սիւնի ներսի և դրսի օդի ճնշութեան տարբերութիւնը, այնքան էլ արագ է նա շարժւում, այնքան էլ ուժեղ է լինում ինքը քամին:

Մեծ աւազուտ անապատներում խիստ քամին փոշու փոխարէն պտտում է աւազի սիւներ: Դժբաղդութիւն կլինի, եթէ այդպիսի քամի յանկարծակի բոնի ճանապարհորդին: Արեից շիկացած աւազի փոշունի ճանապարհորդին: Արեից շիկացած աւազի փոշունի ճանապարհորդին: Արեից շիկացած աւազի փոշունի ճանապարհորդին:



Ջրային թաթառ

տուել: Աւազի ամբողջ ամպեր, մառախուղի նման, ծածկում են երկինքը: Օդը ցերեկով խաւար է պատում: Այս փոշին ոչ թէ միայն մարդուն կարող է ծածկել, այլև ուղտերի ամբողջ կարաւանը:

Աւելի ուժեղ են այն փոթորիկները, որոնք ծնունդ են առնում տաք երկինքի բաց ծովերում:

Փոթորիկներն էլ սկիզբ են առնում բարձրում. Այն օդը, որ վերև է բարձրանում տաք ծովի վրայից, յաճախ կանգ է առնում վերև, փոխանակ հետզհետէ ցըռւելու այս ու այն կողմ: Այդ օդը յետոյ յանկարծ իջնում է ներքե, իսկ նրա փոխարէն նոյնպէս շեշտակի վերև է գնում ներքեի օդը: Այսպէս է առաջ գալիս այն զարհուրելի փոթորիկը, որ կոչւում է «ուրագան»: Ծովի այդ ժամանակ աղմկում է և մոնչում: Կարծէք թէ մի ահագին կաթսայի մէջ ջուր է եռ գալիս: Ծովի մակերեսոյթը ծածկւում է փրփուրով: Քամին ալիքներից փրցնում է այդ սպիտակ փրփուրը և տանում, ինչպէս որ ձեան փաթիւները ձմրան բուքին: Անոելի է այդ ժամանակ ծովի վրայ: Բարեբաղտաբար, այժմ մարդիկ լաւ գիտեն, թէ ինչպէս է օդը շարժւում ուրագանի մէջ: Նրանք կարող են նախագուշակել ուրագանը և ժամանակին պատրաստուել նրան հանդիպելու համար:

Շատ անգամ ծովի փոթորիկները բարձրացնում են վերև ահագին ջրային սիւներ, ինչպէս որ աւազն անապատում: Դրանք՝ ջրային «թաթառ»ներն են: Եթէ ամպերը շրջում են ցած ծովի վրայ, իսկ թաթառ պատճառող փոթորիկը խիստ ուժեղ է, այն ժամանակ ջրային սիւնի կատարը երբեմն հասնում է ամպերին և պատում են նրա հետ միասին: Այդպիսի թաթառը շոգենաւին հանդիպելիս՝ ջարդում է նրա կայմերը և լցնում նրան ծովային աղի ջրով: Քիչ է պատահում սակայն, որ նա մեծ վնաս պատճառի: Սովորաբար ծովային նաւերը խիստ մեծ են,

և թաթառը չէ կարողանում շուռ տալ նրան կամ լցնել իր ջրով:

XVIII. Ինչո՞վ է զանազանում կենդանիների արտա-
ւնչած օդը հասարակ օդից:

Մենք շատ բան իմացանք օդի մասին և դեռ
շատ բան կարելի էր պատմել նրա մասին: Արժէ
նրա հետ մօսից ծանօթանալ, որովհետև երկրիս վը-
րայ բոլոր ապրողների համար օդից աւելի կարևոր
ոչինչ չկայ: Օդը շնչելը մեզ համար նոյնպէս ան-
հրաժեշտ է, ինչպէս ուտելը կամ խմելը, և դեռ էլի
աւելի: Մենք երկար ժամանակ կարող ենք քաղցի
կամ ծարաւի դիմանալ, իսկ առանց օդի մի ժամ էլ
չենք կարող ապրել:

Երբ մենք օդ ենք ներշնչում, նա մտնում է մեր
թոքերի մէջ, թոքերը—փուքսեր են, որոնք մէկ ըն-
դունում են իրանց մէջ օդ, մէկ դուրս են թողնում:

Թէ ինչու է փուքսի մէջ օդ մտնում, երբ մենք
նրանց ձգում ենք, — դուք այժմ գիտէք: Նա ներս է
մտնում այն պատճառով, որ փուքսը ձգելով՝ մենք
նոսրացնում ենք միջի օդը, պակասեցնում ենք նրա
ճնշումը: Դրսի օդի ճնշողութիւնը նոյնպէս մեծ է
մնշում, ինչպէս որ առաջ էր: Նա գերակշում է
փուքսի օդի ճնշողութիւնից, և դրսի օդը թափան-
շում է փուքսերի ներսը, մինչև որ ներսի և դրսի
օդի ճնշումը նորից միակերպ կըդառնայ:

Մեր թոքերը գործում են առանց հանգստանա-

լու ցերեկ և գիշեր մեր ամբողջ կեանքի ընթացքում։
Եթէ մարդս դադարում է տնչել, խեղուում է։

Այն օդը, որ մենք ներշնչում ենք, զանազան-
ւում է այն օդից, որ արտաշնչում ենք։ Դժուար
չէ սրանում համոզուել, Բաժակի մէջ մի քիչ կրա-
ծուր ածեցէք, այսինքն այնպիսի ջուր, որի մէջ
լուծուած է կիր և որ կարելի է ամեն մի գեղատա-
նը ձեռք բերել, և փորձեցէք խողովակի միջից բե-
րանով փչել նրա մէջ ձեր արտաշնչած օդը։ Դուք
իսկոյն կըտեսնէք, որ ջուրը կըպղտորուի։ Այս մթու-
թիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաւիճի ամենամանը
փոշի։ Նշանակում է որ արտաշնչած օդի մէջ այն-
պիսի մի բան կայ, որ կրաջըի մէջ լուծուած կիրը
կաւիճի փոխարկեց։

իսկ ի՞նչ բան է այդ...

Փորձեցէք մի կտոր կաւիճ զցել թունդ քացախի
մէջ։ Դուք կընկատէք, որ կաւճի կտորը շուտով կը
ծածկուի գաղի մանրիկ բշտիկներով։ Սրանք կաւճից
բաժանուելով՝ կըբարձրանան վերև։ Այս նոյն գաղն
է, որ գուրս է գալիս սելտերեան ջրից կամ թունդ
կւասից, երբ բաց ենք անում շիշը։ Դա կոչում է
ածխաթթու գաղ։ Ուրեմն կաւիճի մէջ կայ ածխա-
թթու գաղ կամ ածխաթթուուա։

Քացախի մէջ մի ուրիշ թթւուտ էլ կայ - «քացախային»: Հէսնց դա է կաւիճի վրայ ներգործողը: Կաւիճը փոխուում է նրանով և նրա փոխարէն ստացւում է մի բոլորովին ուրիշ նիւթ:

Կաւիճը կարելի է անուանել «ածխաթթու կիր»,

որովհետև նրա մէջ կայ կիր և ածխաթթու գազ: Կա-
ւիճից ստացուող նիւթի մէջ ածխաթթուուտի փոխա-
րէն կրի հետ միացած է քացախաթթուուտը, և այս-
պիսի կիրը մենք կարող ենք անուանել քացախա-
թթուային կլիր»:

Քրիստով պատճեն է:

Այսպէս ուրեմն, արտաշնչուող օդը ներշնչուո-
ղից զանազանուում է նրանով, որ նրա մէջ շատ ած-
խաթթու գաղ կայ, իսկ սովորական օդում շատ քիչ
կայ նրանից: Այսուհետեւ, արտաշնչուող օդը աւելի
խոնաւ է: Վերջապէս նրա մէջ մի ուրիշ փոփոխու-
թիւն էլ առաջ եկաւ, որի մասին ես ձեզ յետոյ կը
պատմեմ:

ХІХ. Ի՞նչպէս ձեռք բերենք ածխաքրու գազը:

Որպէս զի ածխաթթու գաղ ստանանք կաւիճից,
կարելի է ոչ թէ միայն քացախ վերցնել, այլ և ու-
րիշ ամեն տեսակ թթուուա: Փորձեցէք հաւաքել ած-
խաթթու գաղը... Եթէ ունիք մի երկբերան սրուակ,
խաթթու գաղը... Եթէ այդ անել: Երկբերան սրուակի խցան-
շատ հեշտ է այդ անել: Երկբերան սրուակի խցան-
ներից մէկի ծակից ձագառի ծայրն անցկացրէք, իսկ
միւս խցանի ծակից՝ ապակէ մի ծռած խողովակ: Այսու-
հետեւ սրուակի մէջ լցըէք կաւիճի մանր կտորներ և

լոցանները պիխու ամրացնելով՝ ձագառից մէջը ածեցէք թթւուտը:

Հէնց որ թթւուտը ածէք մէջը, — կաւիճից դուրս
կըթոչեն ածխաթթու գաղի պղպջակներ։ Զագառի
ծայրը պէտք է հասնի սրուակում ածած թթւուտին.
հակառակ դէպքում ածխաթթու գաղը ձագառից դուրս
կերթայ օդի մէջ։ Այժմ ածխաթթու գաղը ծռած կը
դնայ ապակէ խողովակով։ Նրա տակը մի սրուակ
դրեցէք։ Ածխաթթու գաղը օդից ծանր է և կըհաւա-
քուի սրուակի յատակում։ Նա թափանցիկ է և դուք
ի հարկէ ոչինչ չէք տեսնի սրուակի մէջ։ Բայց զգու-
շութեամբ հանեցէք նրա միջից խողովակի ծայրը և
մի քիչ կրաջուր լցրէք մէջը։ Զուրն իսկոյն սաստիկ
կըպղտորուի, կարծես թէ նրա մէջ փչեցին։ Ածխա-
թթու գաղը նորից միացաւ կրի հետ, և դուք նորից
ածխաթթուային կիր կամ կաւիճ ստագաք։

Եթէ երբէք չի պատահել ձեզ տեսնել այդպիսի
մի բան, այն ժամանակ այդ ձեզ խիստ հետաքրքրա-
կան կըթուայ: Տարօրինակ փոխարկութիւն է, չէ:
Պինդ կաւիճից բաժանում է մի գազ, որ առաջ ոչ
մի կերպ չէիք կարող նկատել կաւիճի կտորի մէջ:
Կաւիճի կիրը միանում է թթվուախ հետ, և բոլորու-
վին նոր նիւթ է ստացւում: Այն ինչ ածխաթթու
գազը նորից միանում է ջրում լուծուած կրի հետ—
և նորից ստացւում է պինդ, ջրում չըլուծուող կա-
ւիճ:

Մեր շուրջը շարունակ պատահում են այդպիսի
փոխարինութիւններ։ Մի քանի նիւթեր ներգործում

են միւսների վրայ, փոխւում են, միանում են մէկը
միւսի հետ և կամ նորից բաժանում։ Երկրիս վրայ
մշտական, անփոփոխ ոչինչ չկայ, — ամեն բան փոխ-
ւում է։ Այն, ինչ որ մենք ուտում ենք, հետզհետէ
փոխւում է մեր արեան և մարմնի։ Մենք աճում ենք
և ծերանում։ Այն ամենը, ինչ որ բոյսերը իրանց
արմատներով հանում են իրանց համար գետնից,
նոյնպէս փոխարկւում է նրանց մարմնի։ Մի քանի
բոյսեր ուրիշ բոյսերի սկզբն են դառնում։ Քարերն օ-
դում, ինչպէս ասում են, քամու են արւում, փո-
փոխւում են, մանրանում են և փշրւում։ Նրանք
փոխւում են կաւի և աւազի։ Զուրը, շարունակ շար-
ժուելով, ողողում է գետինը, — լուանում է սարերը,
հովիանները։ Նա շարունակ գոլորշիանում է, անցնում
օդի մէջ և նորից ընկնում գետնին իրեկ անձրև,
կարկուտ և ձիւն։ Ինքն օդը ման է գալիս երկրի
շուրջը, իր հետ տանում ամպերն ու զանազան նիւ-
թեր։ Նա մէկ տաքանում է, մէկ նորից սառչում։
Ամեն ինչ շարժում է, ամենը փոփոխւում։ Եւ մար-
դիկ շարունակ աշխատում են իմանալ, թէ ինչպէս է
կատարւում բոլոր նիւթերի այս յաւիտենական շար-
ժողութիւնն ու փոփոխութիւնը։ Ինչքան շատ բան
իմանան մարդիկ, այնքան աւելի լաւ կարող են նը-
րանք օգուտ քաղել այն ամենից, ինչ որ շրջապա-
տում է նրանց, հէնց իրանց օգտի համար։

XX. Ածխաթթու գազի եւ թրուածնի մասին:

Ածխաթթու գազը մշտապէս կազմւում է մեր մարմնի մէջ և դուրս է գալիս արտաշնչուող օդի հետ միասին։ Այս պատճառով էլ մեզ շրջապատող օդի մէջ միշտ կայ ածխաթթու գազ։ Նա կեանք չէ պահպանում։ Կենդանին այս գազի մէջ արագ կերպով խեղաւում է։ Փակուած սենեակում, ուր հաւաքուած է լինում շատ ժողովուրդ, օդը միշտ շուտ է փշանում։ Այստեղ օդը խեղաող է լինում, ծանր է լինում շնչել։ Ինչու։ Որովհետեւ այդպիսի սենեակում կամաց-կամաց հաւաքուած են վնասակար գազեր և նրանց մէջ յատկապէս՝ ածխաթթու գազը։

Սովորական օդի մէջ ածխաթթու գազ շատ քիչ կայ։ Օրինակի համար, նրա չորս մասը գալիս է օդի 10 հազար մասին։ Բայց նրա քանակը շարունակ փոխում է։ Քաղաքներում, ուր շատ ժողովուրդ է հաւաքուած, աւելի շատ ածխաթթու գազ կայ, քան քաղաքից դուրս։ Այս պատճառով էլ ամառը, ամառային արձակուրդներից օգուտ քաղելով, ով որ կարող է՝ քաղաքից դուրս է գնում՝ գիւղը կամ ամառանոց։ Աւելի պակաս ածխաթթու գազ կայ գետնից բաւական բարձր—լեռներում, բայց նրանից էլ աւելի պակաս ծովի վրայ։ Օդի մէջ հէնց ծովի վրայ ածխաթթու գազ ամենաին չկայ։ Ուստի և այնպէս հեշտ է ծովի վրայ շունչ քաշելը։ Եթէ օդի 100 մասի մէջ միայն 3 մաս ածխաթթու գազ լինի, այն ժա-

մանակ օդն արդէն խեղաող է լինում և առողջութեան համար վնասակար։

Շունչ քաշելով մենք մեզնից հեռացնում ենք այդ գազը, իսկ նրա փոխարէն մեր մարմնի մէջ մը-նում է մի ուրիշը, առանց որի չի կարող ապրել և ոչ մի կենդանի։ Դա կոչում է «թթուածին»։ Զոր օդի հինգերորդ մասը դրանից է բաղկացած։ Նշանակում է, որ սովորական օդը, որ մենք շնչում ենք, ոչ թէ մէկ գազից է բաղկացած, այլ զանազան։ Նրա մէջ կայ թթուածին, մի քիչ ածխաթթու, միշտ պարունակում է ջրային գազ կամ ջրային շոգիներ. կայ, վերջապէս, և էլի մի քանի ուրիշ գազ։

Ինչպէս որ հեղուկները զանազան են լինում, այնպէս էլ զանազան են նաև գազերը, միայն գազերի միջև եղած տարբերութիւնն այնպէս պարզ չի երևում, որովհետև չէ որ իրանք գազերն էլ, որոնց մասին ես խօսում եմ, անտեսանելի են։ Նրանք բոլորն էլ թափանցիկ են, բոլորն էլ խառնում են օդի հետ։ Մարդիկ երկար ժամանակ չէին իմանում գազերը մէկը միւսից ջոկել, և երկար ժամանակ չզգիւածին, թէ ինչ գազերից է բաղկացած օդը։ Միմիայն 100 տարուց մի քիչ աւելի է, ինչ որ յայտնի եղաւ գիտնականներին, որ սովորական օդի մէջ միշտ կայ թթուածին։ Այն ինչ թթուածինը մեզ համար օդի ամենակարենը մասն է։ Այն օդի մէջ, ուր թթուածին չկայ, կենդանին արագ ոչնչանում է։ Եթէ նրա քանակութիւնը միմիայն մի եօթերորդ մասով պակասի,

այդպիսի օդով շունչ քաշելն արդէն դժուար է լինում:

Այժմ դուք գիտէք, ի՞նչ բանի համար է ծառայում մեր շնչած օդը: Մենք նրանից վերցնում ենք թթուածինը, իսկ դրա փոխարէն տալիս ենք նրան ածխաթթու գազ:

Ի՞նչպէս է որ թթուածինը չի պակասում, ինչպէս այդ երևում է օդից, երբ որ բոլոր կենդանիները կլանում են նրան: Մի արև օր կտրեցէք մի թարմ կանաչ ճիւղ իր տերեներով: Կապեցէք նրանից մի խիճ, որպէս զի խորասուզուի ջրի մէջ և գցեցէք ջրով բաժակի մէջ: Բաժակը դրէք արևի տակը: Շուտով կըտեսնէք, որ տերեները կըծածկուեն ինչ-որ գազի պղպջակներով: Այդ գազը թթուածինն է: Եթէ բաժակը դնէք մթան մէջ, պղպջակներ տերեների վրայ չեն երևայ: Ապա ուրեմն, կանաչ բոյսերը լուսի մէջ իրանցից արձակում են թթուածին, որը փոխարինում է այն թթուածնին, որ կլանում են կենդանիները: Բոյսերի կանաչ մասերը, մանաւանդ տերեները, ծածկուած են բազմաթիւ ծակոտիքներով, ուրոնք մտնում են տերևի կամ կանաչ ճիւղի խորքը: Դրանք այնքան մանր են, որ կարելի էնկատել միայն մանրադիտակով: Ահա դրանցից դուրս եկան թթուածնի բշտիկները: Բայց որտեղից դոյացաւ այդ թթուածինը: Այս բանը հասկանալու համար ես ձեզ մի քանի բան կըպատմեմ այդ գազի առանձնայատկութիւնների մասին:


XXI. Ինչպէս կարելի է ձեռք բերել մայուր թրուածին:

Մաքուր թթուածին գազ դժուար չէ ձեռք բերել, բայց սրա համար պէտք է մի փոքր փող ծախսել: Ամենից առաջ պէտք է գեղատնից կամ դեղատնային պահեստից մի առանձին տեսակ սրուակ առնել, որ կոչւում է փունդ (րետորտ). յետոյ մի կարճ ուետինէ խողովակ այնպիսի լայնութեան, որ կարելի լինի պինդ խցել փունդի ծայրին. վերջապէս, 2—3 ունց բէրտօլէտի աղ և նոյնքան էլ սկ փոշի, որ կոչւում է թխաքար (перекись марганца): Մնում է միայն մաւթուլից պատուանդան շինել փունդի համար, ինչպէս որ ցոյց է տուած նկարի վրայ: Երբ այս դիմում է տուած նկարի վրայ: Եթէ բոլորը ձեռք կըբերէք, գնած բէրտօլէտի աղը մանր բոլորը ձեռք կըբերէք, գնած բէրտօլէտի աղը մանր ջարդեցէք և յետոյ լաւ խառնեցէք թխաքարի հետ: Խառնուրդը շաղ տուէք փունդի մէջ: Փունդի ծայրին հացցրէք ուետինէ խողովակը: Փունդը մաւթուլով պատուանդանին կապելով, դրէք ափսէի վրայ: Այժմ կարելի է փոքրիկ լամպիկը վառել և դնել փունդի տակ:

Բէրտօլէտի աղի մէջ թթուածին կայ, ինչպէս որ կաւիճի մէջ՝ ածխաթթու գազ: Եթէ տաքացնէք բէրտօլէտի աղը, այն ժամանակ թթուածինը դուրս է գալիս նրանից: Հէնց այս եղանակով էլ կաւիճից կարելի է ածխաթթու գազը հանել, միայն նրան շատ սաստիկ պէտք է տաքացնել: Բէրտօլէտի աղից թըստածինը շատ աւելի հեշտ է դուրս գալիս: Թխաքարի հետ բէրտօլէտի աղը լաւ է տաքանում և նրա-

նից հեշտութեամբ է թթուածինը դուրս գալիս: Այս ճանապարհով բէրտօլէտի աղից կարելի է նրա ամբողջ թթուածինը հանել: Թթուածինը կը գնայ օղի մէջ, իսկ բէրտօլէտի աղի տեղ կը մնայ արդէն մի ուրիշ նիւթ, որ նման չի լինի բէրտօլէտի աղին:

Իսկ բնչ եղանակով հաւաքենք այս թթուածինը: Վարուել այնպէս, ինչպէս ածխաթթու գազի հետ, չի



կարելի, սրովհետև թթուածինը շատ քիչ ծանր է օդից և սրուակից դուրս կը գնայ: Ուէտինէ խողովակից դուրս գնացող թթուածինը հաւաքելու համար, խողովակի ծայրը դնում են՝ մէջը ջուր լցրած թասի մէջ, իսկ խողովակի վրայ շուռ են տալիս ջրով լիքը սրուակ: Այս սրուակը ջրով այնպէս պէտք է կործել, որ մէջը օդ չըմտնի: Այժմ թթուածնի պղպջակ-

ները կը մտնեն սրուակի մէջ և ջուրը դուրս կը մղեն այնտեղից:

Հետեւեցէք թթուածնի բաժանուելուն: Պղպջակ-ները միմեանց ետելից դուրս են գալիս խողովակի ծայրից և բարձրանում վերև, սրուակի ջուրը փոքր առ փոքր իջնում է: Հետեւեցէք, որ լամպիկի բոցը չըտատանուի և որ փունդի տաքանալը շարունակուի ամբողջ ժամանակ առանց ընդհատուելու: Ահա, վերջապէս, սրուակը գրեթէ լքցուեց թթուածինով: Այժմ ջրի մէջ տակից մի սկուտղ դրէք և առանց սրուակը ըուն տալու՝ հանեցէք այն սկուտղի հետ միասին: Եթէ գեռ էլի գազի պղպջակները դուրս են գալիս, կարելի է թթուածինով լցնել էլի մի սրուակ, բայց մեզ համար այդ մէկն էլ բաւական է: Ամեն դէպքի համար ես ձեզ խորհուրդ եմ տալիս, լամպիկը հանգցնելուց առաջ, ուետինէ խողովակը ջրից հանել: Եթէ այդ չանչք, հէնց որ լամպիկը հանգցնէք, ջուրը ուտինէ խողովակով դուրս կը գնայ: Կը գնայ տաք փունդի մէջ և փունդը կը տրաքուի:

XXII. Ինչո՞վ է բբուածինը զանազանում ածխաբրու զազից եւ ո՞րտեղից է նա գոյանում բոյսերի մէջ:

Տեսնենք ստացուած թթուածինը: Տեսքով նա, ինչպէս և ածխաթթու գազը, բոլորովին նման է օդին: Նա նոյնպէս թափանցիկ է, անհոտ և անհամ: Ի՞նչպէս ուրեմն զանազանենք հասարակ օդից: Սրա

միաւորուելով՝ կաւիճ են դառնում, այնպէս էլ ձեր սրուակում ածուխը միացաւ թթուածնի հետ։ Ածուխը թթուածնի հետ նոր նիւթ գոյացը եց. — ածխա-
թթու գաղը։

Այժմ դուք կհասկանաք, թէ որտեղից են բոյ-
սերը վերցնում թթուածնը, որ դուրս է գալիս նը-
րանց ծակոտիքներից։ Բոյսերը ներս են շնչում օդից
ածխաթթու գազ։ Սա մտնում է նրանց մէջ հէնց
նոյն ծակոտիքների միջոցով։ Բոյսերի ներսը այս
ածխաթթու գազը բաժանում է ածուխի և թթուածնի։
Գազը բաժանում է գալիս բոյսից, իսկ ածու-
թթուածնը դուրս է գալիս բոյսից, իսկ ածուխը չէ,
իսը մնում է մէջը։ Բայց սա այն ոև ածուխը չէ,
որ ձեզ լաւ յայտնի է. բոյսերի մէջ մաքուր ածուխ
որ ձեզ լաւ յայտնի է. բոյսերի մէջ մաքուր ածուխ
չէ նաև ածխաթթուն բաժանում է ածուխի և
չկայ։ Եթէ ածուխի փոխարէն իշեցնենք նրա մէջ
միացող մարիսը, նա ճիշտ այնպէս սպիտակ բոցով
կը վառուի, ինչպէս բէնգալեան կրակը։

Մինչև որ ածուխը կայրուի, կը տեսնէք, որ
կրաջուրը սաստիկ պղտորուեց։ Ի՞նչ պատահեց։ Այդ
որտեղից ստացուեց ածխաթթու գաղը։ Հէնց նրա-
նից պղտորուեց կրաջուրը։ Ածուխն այրուեց։ Նրա-
նից միայն մի քիչ մոխիր մնաց, իսկ սրուակի մէջ
երկաց ածխաթթու գազ։ Բայց որտեղից ստա-
ցուեց։ Հասկանալի է, որ դրսի օդից չստացուեց, ո-
րովհետեւ սրուակը շարունակ փակ էր։ Նշանակում
է, որ այդ գաղը կարող էր առաջ գալ միայն թը-
թուածնից և ածուխից։ Արուակի միջի ջուրը, մաւ-
թուլը, ապակին, խցանը—բոլորն էլ նոյնը մնացին,
ինչպէս էին առաջ, բայց ածուխն ու թթուածնը
փոխուեցին։ Ինչպէս որ կիրն ու ածխաթթու գաղը

Պէտք է ասել, սակայն, որ բոյսերն էլ օդից
կլանում են թթուածնն, ինչպէս որ կենդանինե-
կամ նրա կարմրացրած երկաթէ ծածկի վրայ, նորից
կամ նրա կարմրացրած երկաթէ ծածկի վրայ, նորից
կստանաք այն ածուխը, որ բոյսն առաջ վերցրել է
օդից։ Այրենք այս ածուխը և դարձեալ կստանանք
ածխաթթու գազ։

միաւորուելով՝ կաւիճ են դառնում, այնպէս էլ ձեր
կարելի լինի թթուածնի սրուակը փակել. յետոյ վերց-
րէք լուցկի, կրաջուր, մի փոքր կտոր ածուխ երկա-
թէ թելին հագցրած, և վերջապէս մի չոր բարակ
մարխ։ Այժմ շուր տանք թթուածինով սրուակը բե-
րանը դէպի վեր։ Ածենք նրա մէջ ինչքան կարելի է
շուտ մի քիչ կրաջուր և շտապով խուփը նորից ծած-
կենք։ Կրաջուրը կը մնայ բաց գոյնի։ Ապա ուրեմն,
սրուակում ածխաթթու գազ չկայ։ Յետոյ ածուխի
կտորը վառենք և խցանը հանելով՝ երկաթի թելից
իջեցնենք սրուակի մէջ։ Ածուխն իսկոյն կը բունկի
այնպիսի պայծառ բոցով, որ դժուար կը լինի վրէն
նայել։ Եթէ ածուխի փոխարէն իշեցնենք նրա մէջ
միացող մարիսը, նա ճիշտ այնպէս սպիտակ բոցով
կը վառուի, ինչպէս բէնգալեան կրակը։

Մինչև որ ածուխը կայրուի, կը տեսնէք, որ
կրաջուրը սաստիկ պղտորուեց։ Ի՞նչ պատահեց։ Այդ
որտեղից ստացուեց ածխաթթու գաղը։ Հէնց նրա-
նից պղտորուեց կրաջուրը։ Ածուխն այրուեց։ Նրա-
նից միայն մի քիչ մոխիր մնաց, իսկ սրուակի մէջ
երկաց ածխաթթու գազ։ Բայց որտեղից ստա-
ցուեց։ Հասկանալի է, որ դրսի օդից չստացուեց, ո-
րովհետեւ սրուակը շարունակ փակ էր։ Նշանակում
է, որ այդ գաղը կարող էր առաջ գալ միայն թը-
թուածնից և ածուխից։ Արուակի միջի ջուրը, մաւ-
թուլը, ապակին, խցանը—բոլորն էլ նոյնը մնացին,
ինչպէս էին առաջ, բայց ածուխն ու թթուածնը
փոխուեցին։ Ինչպէս որ կիրն ու ածխաթթու գաղը

իրանցից թթուածին, որ հարկաւոր է կենդանիների համար, իսկ կենդանիները—ածխաթթու գազ, որ հարկաւոր է բոյսերի համար։ Այսպիսով երկրիս վրայ շարունակ շրջանառութիւն է կատարւում. այն ամենը, ինչ որ բոյսերը վերցնում են երկրից և օդից, երբեցէ նորից վերադառնում է երկրին և օդին։ Ոչինչ բան չէ անյայտանում,—ամենը, ինչ որ կայ մնում է։ Փոփոխւում են միմիայն զանազան նիւթերի միաւորութիւնները։

Այժմ դուք քիչ թէ շատ գիտէք ածխաթթու գաղի և թթուածնի մասին և կարող էք երկու գաղերը մէկ մէկուց ջոկել կրաջրի և տաք մարխի օդնութեամբ։ Մարխը հէնց նրա համար էլ վառւում է օդում, որովհետև մէջը թթուածին կայ։ Այս պատճառով էլ օդում այրւում է և մոմը, և թուղթը, և ուրիշ շատ նիւթեր։ Ուստի և եթէ վառուած մարխը գցէք շշի մէջ, նա իսկոյն կհանգչի. շշի մէջ եղած օդի ամբողջ թթուածինը շատ շուտով գործ կդրուի մարխի այրուելու վրայ։ Եթէ շիշը լցնենք ածխաթթու գաղով և դրանից յետոյ մէջը գցենք վառուած մարխ, իսկոյն սա կհանգչի։

XXIII. Ազօտի մասին։

Ինչքան էլ կարեոր լինի թթուածինը երկրիս վրայ ամեն ապրողների համար, բայց, ինչպէս ձեզ ասի, օդի միայն մի հինգերորդ մասն է կազմում նա։ Աւելի պակաս են օդի մէջ ջրային գոլորշիներն

ու ածխաթթու գազը։ Օդի մեծ մասը կազմում է մի առանձին տեսակ գազ, որ դժուար չէ ստանալ ուղղակի օդից։ Այդ գազը կոչւում է ազօտ։ Եթէ դուք վառած մեղրամոմի կտորի վրայ ծածկէք ուռ տուած բաժակ, կամաց կամաց թթուածինը կծախսուի մոմի այրուելու վրայ, և մոմը կը հանգչի։

Հապա փորձեցէք այդ բանն անել այս եղանակով։ Զեռք բերեցէք քաղցրաւենու մի կճուճ։ Խորը ափսէի մէջտեղում մի վերշոկաչափ մեղրամոմ կը պցըրէք։ Ափսէի մէջ մինչև ափը լցրէք կրաջուր։ Մոմը վառեցէք և կճուճով ծածկեցէք։ Ուղղակի վերկից չպէտք է ծածկել, այլ կճուճը փոքր ինչ թեքած, որ կճուճի տակից մի փոքր ջուր մնայ։ Եթք մոմը հանգչի, կը տեսնէք, որ ջուրը մտնում է կճուճի տակից և բարձրանում վերև։ Փոքրառփոքր այս ջուրը պղտորւում է, ածխաթթու գազը միանում է ջրի հետ, և կարճ ժամանակից յետոյ կճուճի տակ էլ չի մնում նա։ Այն տեղը, որ առաջ բռնած ունէր թթուածինը, իսկ յետոյ ածխաթթու գազը, այժմ կբռնի կճուճի մէջ բարձրացող ջուրը։ Եւ այդ շատ հասկանալի է. թթուածինը կազմում է կճուճի մէջ գտնուած օդի մի հինգերորդ մասը. այժմ թթուածին չկայ, և տեղը ջուրն է բռնել։ Պէտք է սակայն, ասել, որ այս այնքան էլ ճիշտ չէ։ Գուցէ և թթուածնի գլխաւոր մասը գործ դրուեց այրուելու վրայ, բայց ոչ ամբողջ թթուածինը. մոմը աւելի վաղ հանգաւ։ Այս պատճառով էլ կճուճի մէջ մնաց ոչ-մաքուր ազօտ ջրային գոլորշիներով.՝ նրա մէջ


մասց էլի մի քիչ թթուածին։ Որպէսզի աւելի մաշքուր ազօտ ստանանք, կճուծի տակը այրուելու համար ոչ թէ մոմ են վերցնում, այլ լուսածին (ֆօսֆօր)։

Ազօտը, ինչպէս և թթուածինը, ոչ գոյն ունի, ոչ հոտ. մոմն ու ածուխը նրանում իսկոյն հանգչում են, իսկ կրաջուրը մնում է պայծառ։ Ազօտը աւելի թեթև է, քան թթուածինը, ապա ուրեմն և աւելի թեթև քան օդը։

XXIV. Թէ ինչպէս է օդը տաքացնում երկիրը։

Այսպէս ուրեմն դուք տեսաք, որ մեզ շրջապատող օդը հասարակ գագ չէ։ Այժմ դուք գիտէք, թէ ինչու այս օդը այնքան կարեոր է երկրի վրայ բուլոր ապրողների համար։ Բայց նա մի ուրիշ կարեոր նշանակութիւն էլ ունի։ Օդը երկրի համար նոյնն է, ինչ որ տաք շորը մեզ համար։ Եթե մենք ասում ենք, թէ շոր ըտաք է, այդ դեռ չի նշանակում, որ նա մեզ տաքացնում է, նա չի տաքացնում, այլ միայն մեր մարմինը պաշտպանում է սառելուց։ Նոյնպէս էլ օդը, ինքը երկրից տաքանալով, տաքութիւն է պահպանում նրա շորջը։ Եթէ երկիրը ամեն կողմից տամափաթթուած չլինի այդ օդեղէն շորով, այն ժամանակութիւնը սառը, անկեանք անապատի կը փունակ նա շուտով սառը, անկեանք անապատի կը փունարկուէր։ Երկիրը տաքանում է արևով, իսկ օդն իսարկուէր։ Երկիրը տաքանում է երկրից։ Հազիւ թէ այր տաքութիւնը ստանում է երկրից։ Հազիւ թէ արևու մայր է մտնում, հազիւ թէ գիշերը վրայ է հասրել մայր է մտնում, հազիւ թէ գիշերը վրայ է հասրել, որ երկիրը նորից սկսում է սառել։ Նա նորից

կորցնում է իր տաքութիւնը։ Ահա այդ ժամանակ է օդը «տաքացնում» երկիրը, մինչև որ նորից արել կծագի և նորից կը լցնին րան իր տաք ճառագայթներով։ Սակայն



Եղեամով ծածկուած ծառեր

կիրը։ Բայց հէնց բանն էլ դրանումն է, որ նըանում միշտ ջրային գոլորշիներ կան, և հէնց նըանք էլ հոգում են մեր տաքութեան մասին։

Դուք գիտէք, որ շուրը եղցնելուց առաջ պէտք

օդի ոչքու լոր մասերն են միահաւասար պահպանում երկիրը սառելուց։ Եթէ որ օդը բոլորով վին պարզ մինէր և բաղկացած միայն չորս մաս բորակածնից (ազօտ) ու մի մաս թթուածնից, այն ժամանակ էլ աւելի պահան կը տառ քացնէր երկիրը բանում է գրային էլ դրանումն է, որ նըանք էլ հոգում են մեր տաքութեան մասին։

է տաքացնել: Մինչև եռ գալը նա սկսում է աւելի ու աւելի տաքանալ: Բայց հէնց որ եռ է գալիս, դպրաբում է տաքանալ. և ինչքան էլ որ տաքադպրաբում է տաքանալ: Նա աւելի տաքութիւն չի ընդունի, քանի որ ցնէք, նա աւելի տաքութիւն չի ընդունի, քանի որ եռ է գալիս: Ուրեմն ուր է անյայտանում այն տաքութիւնը, որ ջուրը ստանում է: Դուրս է թռչում գութիւնը, որ ջուրը ստանում է: Դուրս է թռչում գութիւնը հետ միասին: Ինչքան տաքութիւն որ հարգութշու հետ միասին: Ինչքան տաքութիւն որ հարգութշու հետ միասին: Ինչնդ անգամ ակաւոր է ջուրը եղանելու համար, հինգ անգամ աւելի տաքութիւն է հարկաւոր այդ ջուրը գոլորշացնելու համար: Տաքութիւնը գործ է զրւում հեղուկ ջուրը գազի փոխարկելու համար, այսինքն՝ ջրային շոգիների: Եւ այս բոլոր տաքութիւնը գնում է գուլութու կամ ջրային գազի հետ...

Մատը ջրով թրջեցէք և փչեցէք նրա վրայ: Մատը կըսանի: Երբ փշում էք, ջուրը մատի վրայ արագ կերպով ցամաքում է: ցամաքելով՝ իր հետ տանում է այն տաքութիւնը, որ նա վերցնում է մատից:

Նոյնն է պատահում շարունակ և երկրիս վրայ: Երկրից վեր են բարձրանում ջրային գոլորշիներ և իրանց հետ տանում տաքութիւն: Բայց այս տաքութիւնը ի զուր չի կորչում երկրի համար: Վաղ թէ ուշ օդի ջրային գազը հաւաքուելով կդառնայ մառախուղ, ամպ, և նորից կփոխուի ջրի: Եւ այն ժամանակ տաքութիւնը նորից կազատուի նրանից և կտաքացնի շրջապատող օդն ու երկիրը:

Շատ անգամ իհարկէ տեսել էք, թէ ինչպէս դաշտերի վրայ, խոնաւ տեղերում, ջրերը աշնան երեկոներին ծածկում են սպիտակ մառախուղով: Դուք

արդէն գիտէք, թէ որտեղից է նա գոյանում, գիտէք որ մառախուղը՝ նոյն ամպերն են, միմիայն ծնունդ առած ներքել, երկրի մօտ կամ վերևից իջած սառը օդի հետ միասին: Ինչքան օդը սառն է, այնքան ներքեկ է կազմւում մառախուղը... Դա նոյն խոնաւութիւնն է, որ առաջ գտնւում էր օդի մէջ: Նա այժմ նորից նստում է երկրի վրայ ինչպէս ցող կամ ռեղեամն»...

Զմեոը, միգապատ ցուրտ օրերին, եղեամը ծածկում է աների պատերն ու ծառերի ճիւղերը: Ի՞նչ կում է աների պատերն ու ծառերի ճիւղերը: Թիւրի ու ծագեղեցիկ է այդ սպիտակ ծածկոյթը, Թիւրի ու ծառերի բարակ ճիւղերը թւում են թէ հաստացել են: Նրանք ամեն կողմից, ինչպէս աղուամազով, ծածկուած են եղեամով և նրանց նայելիս մոռանում են, կուած կողմից աղուամազով, այդ ծառերը վազուց արդէն կորցրել են իրանց ամարային կանաչ հագուստը:

Իհարկէ ձմեռը ձեզ պատահած կինի միգապատ օրը տանից դուրս գնալ: Մառախուղը, ինչպէս մի սպիտակ թանձը ծուխ, լցրել է փողոցը: Փողոցի մի կողմից միւս կողմը չէ երկում: Երբ այդպիսի մի օր կողմից միւս կողմը չէ երկար ժամանակ փողոցում լինորից ձեզ պատահի երկար ժամանակ փողոցուց առաջ նայեցէք նել, այն ժամանակ տուն մտնելուց առաջ նայեցէք ձեր մուշտակին: Կտեսնէք, որ նրա ամեն մի մազը ապիտակ աղուամազով է ծածկուած, այդ մամանը սպիտակ աղուամազով է ծածկուած, այս եղեամի ձեռքն է, որ եղեամի ձեռք նստել է մուշտակի վրայ: Նայեցէք նոյնպէս տների պատերին և հեռագործիւներին. բոլորն էլ ծածկուած են սպիտակ աղուամազով-եղեամով:

XXV. Ի՞նչ սովորեցինք մենք օդի մասին:

Այժմ մենք գիտենք, թէ ինչ նշանակութիւն ունի օդը երկրի և նրա վրայ ապրող բոլոր արարածների համար: Մենք իմացանք, թէ ինչնվ է օդը նըման ուրիշ մարմիններին կամ նիւթերին և ինչնվ է գազը զանազանում հեղուկից և պինդ մարմից: Մենք իմացանք, որ օդը ոչ միայն գոյն ունի, այլ և կշիռ. որ նա ճնշում է երկրի վրայ և սրա վրայ եղած ամեն բանի վրայ. որ նա հաւասարապէս ճշնշում է ամեն կողմ: Այժմ մենք գիտենք, թէ ինչու է նա ճնշում և թէ ինչ զօրեղ է այդ ճնշողութիւնը: Մենք գիտենք, թէ ինչ է կատարւում օդի հետ երբ տաքացնում ենք այն և ինչու տաք օդը միշտ բարձրանում է դէպի վեր: Գիտենք թէ ինչ է լինում օդի հետ, երբ նա, երկրի մակերեսոյթից հեռանում է դէպի վեր, ինչպէս է նրանում մառախուղ գոյանում, որ ամպ է կոչւում, և ինչպէս է առաջ գալիս քամին: Այժմ մենք հասկանում ենք, թէ ինչու և ինչպէս է քամին փչում և թէ ինչ կարենը բան է քամին երկրի համար: Ես ձեզ պատմեցի, թէ ինչ գազերից է օդը բաղկացած, ինչնվ են այդ գազերը զանազանում մէկը միւսից և ինչ է պատահում օդին, երբ մենք շնչում ենք: Մի խօսքով, մենք ձեզ հետ իմացանք օդի մասին աւելի շատ, քան ովկիցէ գիտեցել է նրա մասին սրանից հարիւր տարի առաջ:

ՅՅՅՅՅ



ՎԱՐԴԳԵՍ ԱՂԱՆԵԱՆԻ

Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր Ը

Բացի հայ եւ ոուս մամուլի մէջ հրատարակուած բազմաթիւ
յօդուածներից

Առանձին գրեւով տպուած

1. Քառզիրք լատիներեն եւ օսարազգի դարձուածների.
լատիներէն լեզուի քերականութիւնով 75 կ.
2. Անգլիայի բաղաբակրութեան պատմութիւնը
Հ. Բոկլի (թարգմ.) 75 կ.
3. Յովի. Յովիաննիսեան և նրա քննադատները 5 կ.
4. Օդ. պրօֆ. Վազնէրի, պատկերազարդ. (թարգմ.) . 20 կ.

անտիպ

5. Մուս-հայ բնդարձակ բառարան.
6. Գեօրգիա Կավազա չ. I.
7. Ա. Մակուշին. Առողջապահութեան դասընթաց. միջնա-
կարգ դպրոցների համար. թարգմ. մասնագիտական
բառարանով, ծանօթութիւններով և բազմաթիւ պատ-
կերներով ճոխացրած (400 երես.).
8. Պրօֆ. Մ. Բոգդանով. Պատկերներ ոուս բնութիւնից. բնա-
գիտական նկարագիրներ և պատմուածքներ, հայացըրած
և բազմաթիւ ծանօթութիւններով ու պատկերներով
ճոխացրած.
9. Պր. Վազնէր. Զուր թարգմ.
10. » Երկիր »
11. » Կրակ »
12. » Երկնային լուսաւորներ »
13. » Կենդանիներ »
14. » Անտեսանելի հակներ »
15. » Ինչպէս է կազմուած եւ գոր-
ծում մեր մարմինը »